ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ, ամսաթերթ, իր հրատարակչի ամէն ամիս։

Ընկերագրութեան ցեղրոնատեղին է **ՎԵՆԵՏԻԿ — Վանք Մխիթարեանց, Ս. Ղազար։**

Բաժանորդագինն է տարեկան **10 Ֆրանկ** իսմիսի վճարելի։

© National Library of Armenia OCR by Polmarid

«ՀԱՆԹԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ»

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ, 1890

կը հրատարակուի Վիեննայի Մխիթարեան Միաբանութենէն ամէն ամսի սկիզբը։

Տարեկան բաժանորդագինն է 8 ֆր. 4 ռուբլի։

Հասցէն է՝ RÉDACTION DE LA REVUE

«HANTESS»

VIENNE (Autriche) VII, MECHITHARISTENG. 4

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՑ ԹԵՐԹԸ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՆԵՐԿԱՑ 1890 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(ԽՕՓՆԵՐՈՐԴ տարի)

կը հրատարակուի նոյն դիրքով և ծրագրով.

Խմբագրութիւնը կը ստանայ և սեպհական հեռագիրներ։

Տարեկան գինն է 10 ռուբլի, վեց ամսուանը՝ 6 ռուբլի, հատով՝ 5 կոպ.։

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում միայն «Նոր-Դարի» խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարձնակայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Tiflis (Caucase) Rédaction du journal « Nor-Dar ».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԵՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

© National Library of Armenia



ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՀԱՅ – ՎԵՆԵՏ

(Տես յէջ 337)

ԱՅԱՍՈՏԱՆԻ մէջ Վենետաց առաջին Պայլի յիշատակութեան կը հանդիպինք – ինչպէս ըսինք – յամի 1271. իսկ յանուանէ առաջին Պայլ՝ Վենետկոյ դիւանաց մէջ կը գտնենք՝ ի 1282 (յուլիս 22) զՄարինոյ Պատոէր։ Բայց որովհետև զանազան գործք և վճիռք Հայ – Վենետկեան իրաց խառն են Պայլից անուամբ, ժամանակի կարգաւ այդ գործերը յիշատակելէնէս յառաջ, դնենք նաև նոյնպէս ժամանակագրապէս Պայլերը, որչափ ծանօթք են մեզ, ի սուղ միջոցի իբրու վաթսուն և հինգ տարիներու. յորմէ ետքը Այասայ գերուիւնն կամ աւերածն, և Հայոց իշխանութեան գեղեցիկն ու տկարանալը՝ գագրեցոյց նաև անոնց առաքումը յԱդրիական ծովուց իշխողէն։

1282 – 3	Մարին Պատոէր	Marino Badoero.
1285.	Լէոնարտոյ Ճիզի	Leonardo Gizi.
1286.	Մարկոս Սինիոլոյ	Marco Siniolo.
12..	Յովհան տէ Գանալի	Giovanni de Canali.
1290.	Բագրատ Յուստինոս	Pancrazio Giustino.
1293.	Ենրիկ Տէլֆին	Enrico Delfino.

© National Library of Armenia

1296 – 9.	Մարինոյ Սինիոլոյ	Marino Siniolo.
1300.	Պողոս Գուիրինոյ	Paolo Quirino.
1302 – 3.	Անդրէաս Սանուդոյ	Andrea Sanudo.
1304.	Յովհ. Բրեմարինոյ	Giovanni Premarino.
1306 – 9.	Նիկողոս Մորոզինոյ	Nicolò Morosino.
1310 – 2.	Գրիգոր Տոլֆին	Gregorio Dolfin.
1313 – 6.	Յուստին Յուստինեան	Giustino Giustinian.
1317 – 8.	Փիլիպպոս Պարպարիկոյ	Filippo Barbarigo.
1318 – 9.	Պէլէդ Տանտոլոյ	Beletto Dandolo.
1320 – 2.	Յովհաննէս Գարոզոյ	Giovanni Caroso.
1326.	Վլաս Մալիբիէրոյ,	Biagio Malipiero.
1328 – 30.	Պետրոս Պրակատին	Pietro Bragadin.
1333.	Նոյն Պետրոս	» »
1333 – 4.	Մարինոյ Կրիմանի	Marino Grimani.

Այս թուականէն ետքը վճիռն ալ չի կրկնուիր. վասն զի Աքքեա քաղաք՝ քրիստոնեայ ազգաց հզօր մարտկոցը՝ կը բաղխի կը դարնըւի յոխերիմ մեքենայից իրենց հուատոց հակառակորդաց. և իրենցմէ ոմանց՝ ինչպէս Կիպրոսի թագաւորին մատնութեանն ու այլոց թուլութեանը պատճառաւ՝ անզօր ու անարգասաւոր կ'ըլլայ ասպետաց արիական ու մահուչափ քաջութիւնը, և չեն կրնար ազատել զայն և յերկարել արևմտեայց և բովանդակ խաչակրութեան ապահովութիւնը յարևելս. որով ալ հարկ չի մնար Աքքեայի աւերակաց վրայ Պայլ մը կարգել. իսկ Հայաստանի մէջ Նստողին պէտքը հոգալը՝ ծերակոյտը ուղղակի իր վրայ կ'առնու, ու 1289 տարւոյն օգոստոսի 15 թուականաւ տրուած վճռով մը՝ կը սահմանէ անոր թոշակը մերձ ընդ մերձ հատուցանել. և ի 1301 սեպտեմբեր 14 հրամանագրով՝ կ'որոշէ ամէն ամիս ընել այն հատուցումը. և նոյն տարւոյն օգոստոսի 13 ին կը վճռէ որ ի դիւրութիւն իւր գանձուն՝ նոյն հրապարակին վրայ գտնուող Վենետացի վաճառականք պարտական ըլլան տուրք տալ՝ մի առ հարիւր բիզանդ. և որովհետև տրոց հաւաքման պաշտօնեայք (Vicedomini Ternarie) վաճառաբերից վրայ խստութեամբ կը հսկէին, նոյն ինքն Պայլին խնդրանաք՝ քառասունից ժողովը կը վճռէր (1292, յուլիս 1) որ այդ տուրքը հատուցողաց թոյլ և դիւրութիւն ըլլայ իրենց բեռինքը ցամաք հանելու. ժամանակաց համեմատ՝ սահմանեալ սակն ալ փոփոխութիւններ կրեց, մերթ հատուցանելով երկու առ հարիւր, և մերթ ալ հասարակապետութենէն բոլորովին ազատութիւն ընդունելով առանց տրոց ներս մտցընելու իրենց ապրանքը.

Հայաստան Նստող Պայլից կարգը նշանակելնէս ետքը, որչափ կարելի եղաւ մեզ գտնել և ստուգել ի դիւանական գրութեանց, աւելորդ չենք համարիր մէջ բերել նաև այն խօսքերը՝ յորս կը յիշատա-

© National Library of Armenia

կուին անոնց ընտրութիւնք կամ փոփոխութիւնք։ Այսասյ մէջ կենալնուն կամ անկէ հեռանալու համար տրուած հրամանները, իրենց ռոճկին ու ի վաճառականաց պահանջած սակին և տրոց չափը. բնակութեան համար սահմանուած տանց չինութիւնք կամ նորոգութիւնք, և այն պատճառաւ և նպատակաւ եղած դրամական փոխառութիւնք, և այլն. նմանապէս՝ Պայլից հրամայուած կամ յանձնուած առանձին և մասնաւոր պաշտամունք և գործք, ինչպէս երթալ առ թագաւորն Հայոց, և կամ վենետկոյ դքսերէն տրուած կամ առնուած ծանօթութիւնք և տեղեկութիւնք։ Եւ որպէս զի այս այլ և այլ տեսութեանց համեմատ՝ հարկ չըլլայ կրկին և կրկին դառնալ, կամ ժամանակաց հետ ելևէջ ընել, ժամանակագրական կարգաւ գնենք՝ ինչ որ նախայիշատակեալներէն զատ և որիշ՝ գտեր ենք Հայաստան նստող Պայլից վերաբերեալ։

Յանուանէ առաջին յիշատակուած Պայլ կը գտնեմ յամի 1283 (22 յուլիս) զՄարին Պատոէր, որուն թոյլտուութիւն կ'ըլլայ իր ընկերակցաց խորհրդակցութեամբ փոխառութեամբ դրամ հայթհայթել, և այնպէս ձեռք զարնել ի նորոգութիւն բնակութեանն։

1285, յուլիս 5. Նոյն հրամանը կը տրուի նաև Լէոնարդոյ ձիէզի Պայլի։

1287, յուլիս 31. Պայլին պատուէր կը տրուի որ իր տեղէն չհեռանայ։

1288, օգոստոս 6. Թոյլտուութիւն փոխառութեան, որպէս զի կարող ըլլայ նորոգել և պահպանել իր բնակութեան տեղուանքը։

1289. յուլիս 26. Մարկոս Սինիմլոյ Պայլին յանձնարարեցին պաշտամանն՝ քիչ օրէն (օգոստոս 18) Բագրատ Յուստինեանի կը յանձնուի պայլութիւնը, որ 2740 հայկական նոր դրամոյ փոխառութիւն մը կ'ընէ։ Այս դրամոց վրայ պիտի խօսինք ի կարգին։ Ցարին չլրացած՝ Յուստինեանն ալ կ'արձրկուի ի պաշտամանէն. և ինչպէս Սինիմլոյ իր նախորդը, ինքն ալ կը պահանջէ ռոճկին մնացորդը։

1293, մայիս 16. Մասնաւոր վճռով մը կ'որոշուի փոխառութեամբ վճարել Էնրիկ Ցոլֆինոյ Պայլին թոշակը։

1300, հոկտեմբեր 10. Արձակուրդ կը շնորհուի Պօղոս Գուիրինոյ Պայլին։ Նոյն տարւոյն ապրիլ 2 հրամանագրով մը վճիռ տրուած էր որ առ Մատթէոս Գանդինոյ պարտքն հատուցուի։

1302, յունիս 5. Հրաման առ Պայլն Անդրէաս Սանուտոյ 1500 դրամ փոխառութեան։ Յաջորդ տարւոյն մարտ 21 թուականաւ վճռով մը թոյլ կը տրուի նմա երեք ամիս կենալ ուր որ ուզէ, ի Հայս կամ ի Կիպրոս։ Սանուտոյի ժամանակ նոր օրինադրութիւն մը կ'ըլլայ առաքման Պայլից ի Հայաստան (1303, օգոստոս 26)։ Քանի մը օրէն եղաք (սեպտեմբեր 1) ինքն ալ կ'արձրկուի ի պաշտամանէն։

© National Library of Armenia

1304, յունիս 10. Յովհաննէս Բրեմարինոյ Պայլ կը գրուի։ Իրմէ ետքը կը յիշուի Նիկոդայոս Մորոզինոյ. և հաւանական կը թուի ինձ որ իր ընտրութեան ժամանակ (1307) կը սահմանուի որ Յանուտոյի տրուած թոշակը իրեն ալ տրուի նոյն չափով. և եթէ Հայոց թագաւորին և Հասարակապետութեան մէջ եղած քանի մը խնդիրք կարգի չդրուին, Պայլի թոշակին վրայ յաւելուած մ'ալ ըլլայ քսան լիպրէ կրոսից։ Իրմէ ետքը Պայլ դրուեցաւ Գր. Տէլֆին, որ ապա և գեսպան փոխանակ Յովհաննու Ֆոսդարինի վախճանելոյ 1310, ապրիլ 21. մայիս 13։ Ինչուան իր ատեն դեռ վճարուած չըլլալով, ատեանը կը վճռէ որ Բագրատ Պայլին ձեռքով ի Հայս եղած ծախքն հատուցուին, զոր ստիպուած էր ընել նորոգելով տունը և նոր տուն մ'ալ գնելով, և երեք հարիւր դրամից ծախք մ'ալ ունէր թագաւորական հրամանագրի մը ստացման համար, որպէս զի անարգել կարող ըլլայ երթալ ի բերդապահութիւն Կորոնի։ Իսկ Գր. Տէլֆին նոր Պայլին ալ կը շնորհուի 1310, յունիս 3, ի հաշիւ Հասարակապետութեան ունեցած յիւր սեպհական ընչից ծախել որչափ պէտք ըլլայ ի շինութիւն մթերանոցաց։ Ա. Նոյն Տէլֆին կը գրէր դուքսն 1310, յուլիս 28, ծանուցանելով թիէբոլոյի դաւաճանութիւնը։ Յետ միոյ ամի 1311, յուլիս 17, հրաման տրուեցաւ իրեն որ Պէմպոյ կարտի վաճառաբեր նաւաւ կարող ըլլայ դառնալ ի Վենետիկ։ Բայց յաջորդ տարւոյն մէջ դեռ ևս կը գտնուէր նա յԱյաս, և վաճառականական խնդրոց և նիւթոց վրայ կը գրէր և կը ծանուցանէր առ դուքսն. սակայն նոյն տարւոյն կէսէն արձակուած էր ի պայլութենէ, ինչպէս կը տեսնուի Հասարակապետութեան մէկ վճռէն, 1312, օգոստոս 10, որով կը հաւանի որ 1500 կան 1700 դրամով տուն մը գնէ ի Հայս։ Իր յաջորդն եղաւ Թոմ. Ցորանցոյ, որում պատական գործ մը յանձնուեցաւ առ Թագաւորն Կիպրոսի. և երկու տարուընէ ետքը ինքն ալ արձակեցաւ ի պաշտամանէն 1314, մարտ 16։ Յաջորդեց զնա Յուստ. Յուստինիանի. առ որ մասնաւոր վճռով հաւանութիւն տուին 1314, օգոստոս 12, որ կարենայ մինչև տասն լիպրէ ծախսել ի նորոգութիւն եկեղեցւոյ սրբոյն Մարկոսի. և որովհետև քանի մի խնդիրք կային ի ժամանակին Հասարակապետութեան կողմանէ կարգադրելիք, բայց ոչ այնչափ որոշ և բացայայտք, յանձնեցաւ դքսին 1314, օգոստոս 20, որ հարկաւոր տեղեկութիւնները տուին Պայլին այդ խնդրոց նկատմամբ։ Նոյն օրուան վճռով թոյլ տրուեցաւ Յուստինիանու որ կարենայ կրետէէն խար կամ անասնոց բուտ բերել տալ։ Յետ իբր երկու ամաց 1316, ապրիլ 22 հրաման ըրին որ 100 սառակինեան բիզանդի փոխառութիւն մը ընէ։ Նոյն տարւոյն օգոստոսի առաջին օրը ինքն ալ ազատ եղաւ ի պայլութենէ. և յ'31 ամսոյն կը սահմանուին յանձնարարութիւնքն առ յաջորդ նորա Փիլիպպոս Պարպաքիկոյ, և ընծայք առ թագաւոր.

ըրն Հայոց։ ի սկիզբն յաջորդ ամին հրաման կը տրուի իրեն, 1317, յունուար 23, հարիւր բիւղանդ դրամոց գումար մը ծախել ի նորոգութիւն տանն. և այս նպատակաւ հինգ լիրայ կրոս կը յանձնուի ի դիմաց պետութեան։ Վրան տարի ու կէս անցնելէն ետքը, 1318, սեպտեմբեր 8, կը ծանուցուի արձակուրդն ի պաշտամանէն, և թէ արդէն օգոստոս 24 թուականաւ տրուած հրամանագրով մը յաջորդն ալ որոշուած էր՝ Ցանոլոյ Պելլէդդի։ Ցմա յաջորդեց Յովհ. Գարոզոյ 1320. բայց Օշին թագաւորին մահուան լուրն հասնելով՝ խափանեցաւ, 1320, սեպտ. 20, երբն յԱյաս, մինչև յետ միոյ տարւոյ կրկին հաստատուեցաւ և պաշտման տեղին երթալու հրամանն տրուեցաւ 1322, փետր. 25, ինչպէս նաև երկոտասան կրոսից գումար մը ծախելի ի նորոգութիւն տանն։ Ա.յդ վախճանաւ յետ երից ամաց 1325 դրկուեցաւ և փայտ ի Վենետկոյ. բայց չեմ գիտեր ո՞ էր Պայլ ի ժամանակին, Գարոզոյ թէ այլ ոք։ Բայց յետ վերջնոյս յանուանէ Պայլ կը յիշատակուի Վլաս կամ Պիսճիոյ Մալիբիէրոյ, որ յամի 1326 յ'ինն յուլիսի առաքեցաւ պատճենիւ նոր պարգևագրի մը կամ դաշանց Լեւոն Դ Ռուբինեան թագաւորի։ Վլասայ յաջորդն եղաւ Պետրոս Պրակատին 1328, որում կը յանձնուի այլ և այլ խնդրոց վրայ խօսիլ ընդ արքային Հայոց. պատուէր կ'ընդունի օտար տուն չքնաղելու. կը յիշուի նաև արձակուրդն յամի 1331 ի 29 յունուարի։ Ի նմին ամի՝ Ատենին մէկ վճիռը կը նշանակէ զնախորդն Վլաս վախճանեալ ի Հայս, և անոր որդիքը, և կը պատուիրէ Պայլին (Պրակատինի կամ ուրիշի մը) մեռնողին ժառանգաց շնորհել երկու առ հարիւր ի սակէն։ Նոյն հրաման կը կրկնուի և ի 1332 յ'եօթն յուլիսի տրուած վճռով։

Պրակատինի գործոց մէջ նշանաւոր և հետաքննական է տեղեկութիւնը՝ զոր տայ Հայոց նոյն ժամանակի, 1330, վաճառականութեան հանգամանաց վրայ, ինչպէս քիչ ետքը պիտի տեսնենք վաճառականական յարաբերութեանց յիշատակարանայ մէջ։ Երևի նա իբրև Պայլ նաև 1332 թուականին. կամ ան է որ արձակմանն ի պաշտամանէ վճիռն ընդունելէն ետք ալ դեռ յԱյաս կը գտնուէր, և կամ դեռ նոյն գործով կը զբաղէր։ Բայց յաջորդ տարւոյն մէջ կը յիշուի վերջին Պայլն՝ Մարինոյ Կրիմանի 1333, մայիս 13, որում և կը շնորհուի նոր տուն մ'ալ դնելու հրաման. և որ կը կրկնուի յետ միոյ տարւոյ 1334, օգոստոս 13. և նոյն օրը գարձեալ ուրիշ պատուէր մ'ալ կ'ընդունի, ծանուցանելու համազգի վաճառականաց որ Լեւոն Դ թագաւորի նոր պարգևագրին վերահաստատութեան պայմանաց համեմատ, 1333, նոյեմբեր 10, իրենց արծաթոյն կէսը պարտական են դնել յարյունի փողերանոցին, ինչպէս կանխաւ և նախընթաց դաշնագրով մը սահմանուած էր։

Ա՛լ այս թուականէն ետքը չկայ Վենետաց Պայլին անունը կամ

գործ ի Հայս և Ալյաս քաղաքի. վասն զի այս երկու ազգաց շահու աղբիւրը գրաւեցաւ Յեգիպտացւոց ի 1337. և թէպէտ անգամ մ՚ալ յաջողեցան Հայք թափել ազատել զայն ի թշնամւոյն, բայց կարճատեւ եղաւ այն նշոյլն. նաւայ երթևեկք ալ, ինչպէս գիչ եռքը պիտի տեսնենք, չուտով դադրեցան. և Ռուբինեանց ուղղաբուն յաջողութեան բեկմամբ՝ Լեւոն Դ թագաւորի մեռնելովը 1342, որոյ վերջին թուղթն առ դուքսն Վենետկոյ տրուած է յամի 1341 մարտ 1, գրեթէ դադրեցան Հասարակապետութեան յարաբերութիւնք՝ ընդ Նուաղեալ և չիջելափառ պետութեան Հայոց, որ դեռ երեսուն և հինգ տարի ալ շարունակեց։ Ադ միջոցին մէջ անկարելի կ՚երևնայ որ Վենետք գէթ երեսփոխան մը ունեցած չըլլան ի Հայս, ուր կային տակաւին մանր նաւահանգիստք և վաճառականութեան պատկանաւոր տեղիք. բայց ոչ դիւանաց և ոչ պատմութեան մէջ անոնց յիշատակութեան չենք հանդիպած։ Հնար է որ Նիկոլրոսի Պայլին յանձնուած ըլլայ այնուհետև Ի Նիյիկիա Մայոր վենետացի գաղթականաց խնամքն. վասն զի այս միջոց ժամանակի մէջ ալ վենետաց նաւարկութեան յիշատակը կ՚ըլլայ, ինչպէս պիտի տեսնենք հետևեալ գըլխոյն մէջ։

ՆԱՒԱՐԿՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՏԱՑ Ի ՀԱՅՍ

Վենետաց աշխարհահռչակ վաճառականութեան քննութեամբ պարապողաց՝ յայտնի է թէ ինչպէս սովորութիւն ունէին տարուէ տարի պատրաստել ու չինել այլ և այլ տորմիղս նաւաց՝ երեք, հինգ, եօթն, ութ, տասը և աւելի ևս թուով. և տարւոյն սահմանեալ եղանակաց մէջ ընդ որոշեալ չափիս և կայարանս՝ ուղղել ի զանազան շահաստանս աշխարհաց և պետութեանց. ի Պոլիս, ի Կրիտէ, ի Կիպրոս, յԱղեքսանդրիա և ի Հոլանտա, և այլն. նմանապէս որոշուած էր առաքել և ի Հայս, յաշխարհամուտն Ալյաս։ Թերակուտին վճռոյ մէջ՝ ինչպէս ուրիշ տեղեաց, ստէպ կը յիշուին նաև հայագնաց տորմիղք և անոնց թիւը՝ 1278 թուականէն ցվերջ հայկական պետութեան յերբորդ քառորդ չորեքտասաներորդ դարու։ Մեր այս խօսքը կը հաւատարմացընեն բազմաթիւ վճիռք և հրամանագիրք, զորս ըստ ժամանակագրական կարգի և խնամով հաւաքեր ենք ի պետական դիւանաց, ու աւելորդ կը սեպենք կարգել առ տեղեաւս։ Մեծ փոյթ ունէին յընտրութիւն նաւապետաց կամ գլխաւորաց տորմիղաց. նաւարկողք և վաճառականք ալ օրինաց խստութեան ենթարկուած էին, չտալով թոյլ կամ հրաման ում և ինչ՝ ինքնակամ և առանց քննութեան նաւարկել. առանձնական նաւուց ալ հազիւ հրաման կ՚ըլլար ընկերել նաւատորմին։

Սահմանուած էր նաւուց չափն ու ձևը, ինչպէս նաև նաւաստեաց թիւը՝ որ քսանուհինգէն պակաս պիտի չըլլային. ծանօթագոյնք՝ կայէա կոչուած նաւքն էին, և զոր Հայք ի գիրս իւրեանց խալէ Khale կ'անուանեն։

Յաջող ատեն՝ տարւոյն մէջ երկու անգամ կամ կրկին տորմիղք նաւուց կը ղրկէին. մին յետ զատկի, և միւսն որ յաճախագոյն կը հանդիպէր քան զառաջինն, օգոստոսի կէսէն ետքը կամ ի սեպտեմբերի. բայց երբեմն ժամանակին դիպաց համեմատ կ'որոշուէր առաքումն տորմղին։

Ատենական վճիռք ծերակուտին կը սահմանէին նաւատորմղին երթալու ճամբան, կամ նաւահանգիստներն ուր պիտի սպասէին կամ ընկերէին այլոյ տորմղի։

Կը յիշուին երբեմն և նաւողչէն կամ բեռանց սակ՝ զոր պարտէին տալ առ նաւապետն կամ ծովապետ ի հաշիւ տէրութեան։

Տորմղին կենալու և դադարելոյ ժամանակը՝ ուր որ ուղղուած էր և որոյ անուամբը կը կոչուէր, սովորաբար սակաւօրեայ էր, ինչպէս տանուհինգ կամ անկէ ալ քիչ օր, բաւական բեռինքը և վաճառականները ցամաք հանելու համար, և նոր վաճառք և վաճառականներ առնելու։

Դուն ուրեք կը յիշուին չափք և կազմածք բեռանց։

Շարունակելի

© National Library of Armenia

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ԴԷՋԱ ԻՏԱԼԱՑԻ ՀԱՅԱԳԻՏՈՒՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Ժամանակակից իտալացի հայագիտաց մէջ բազմահմտուն և արդէն մեր ընթերցողաց ծանօթ է, Դէջա, (Emilio Teza) ուսուցիչ հին և դասական լեզուաց ի համալսարանին Պատուայի. ամենք յառաջ բանախօսութիւն մը ըրաւ Վենետկոյ Դպրութեանց, Ուսմանց և Արուեստից կառաւին մէջ (Istituto di Scienze, Lettere ed Arti) Հայկական նիւթոց վրայ (Cose Armene), և որոյ բովանդակութիւնը կը համառօտենք յօրագրիս, կամենալով ըսել՝ որ յամենայնի համամիտ չենք հետը, մանաւանդ սրտին ազնուութեան արդիւնք բացատրութեանցը:

Ակնարկութիւն մը ընելով այն հիւրամեծար ասպնջականութեան զոր գրեթէ երկու դար յառաջ վենետկոյ հասարակապետութիւնն ընծայեց՝ արեւելք էն հոն գիմող հայ միաբանից ուխտի մը, կը յաւելու.

«Հասարակապետութիւնն չէր կրնար յուսալ թէ ի կղզեկէն՝ զոր մարգասիրաբար կը նուիրէր նոցա, այնչափ լոյս պիտի ծաւալէր թէ արեւելից և թէ արևմտեայց. և բանիբուն ուսուցչաց երկար շարք մը՝ հրատարակելով ու ծաւալելով հին մատենագրաց երկասիրութիւններ, քաղաքական ու սրբազան պատմութեանց յիշատակարանները պիտի աճեցընէին. նորոգելով լեզուն՝ և մաքրելով յեկամուտ նորաձևութեանց՝ գործի մի պիտի ընէին զայն քաղաքակրթութեան՝ կըրկնելով ու համառօտելով ինչ որ յԵւրոպա շատերը գիտեն, և որովք կ'օգտուին թէ ի Հայաստան և թէ անկէ դուրս բնակող Հայք։ Ուստի մեծ եղաւ փոխարինութիւնն. և մեր հարց ծերակուտին խոհականութեան արդիւնքը կը վայելէ, և կ'ուզէ վայելել համօրէն Իտալիա. և պիտի չհանդուրժէ՝ եթէ երբեք օրինաց բծախնդրութեամբ այս գործասէր օտարականք՝ մեր հայրենեաց բնակութենէն սկսին ձանձրանալ...

«Ոտեն մը բարգաւաճ էր արուեստ տպագրութեան նաև ի դաղթականութեան ցունաց որ ի վենետիկ, և որք հիմա յազատ խազաւորութեանն զոր ունին՝ լաւագոյն կրնան օժանդակել իրենց եկեղեցական պիտոյից. սալա ժողովրդոց համար ալ կը հրատարակուէին ի վենետիկ այլ և այլ հատորներ, թէ աստուածաշունչ գրոց և ծիսարանի հին լեզուո՛ը, և թէ ի դալմատական ափունս գործածական սերպ–խրուաթական բարբառով. հասարակապետութիւնն փոյթ և

խնամք ունէր նաև երբայեցի դպրութեանց... միայն Հայք ինչուան հիմա մնացած են. և օր ըստ օրէ աւելի կը տարածուի և կ'ածի իրենց համբաւն ու ազդեցութիւն։

***

« Հայկական մատենագրութիւնն, եթէ քննելու ըլլայ մէկը անոր սկզբնաւորութիւնն ու ընդարձակութիւնը, բոլորովին եկեղեցական է. թէ ի մեկնութիւնս աստուածաշունչ տառից, թէ ի պաշտօնասէր և յեռանդուն երգն, թէ ի խրատական ուղղեալս առ վանականս և առ աշխարհիկ օրեար, ինչպէս ի պատմութիւնս և ի վարս եպիսկոպոսաց, անապատականաց և սրբոց։ Թէպէտ թէ յաղթական և թէ պարտեալ ազգին քաղաքական կենաց, պատերազմաց, արկածից և դժբաղդութեանց՝ տարեգիրքն ալ խնամքով և սիրով կը հաւաքէ, սակայն աւելի սրբավայրին կը զրաղի պատմիչն, մանաւոր փութով մը և նպատակաւ, միացընելով միշտ իրարու հետ թագաւորաց կեանքը ընդ քահանայապետականաց։

« Աստուածաշունչ գիրք՝ առաջին ընձիւղ կամ սկզբնաւորութիւն են, ինչպէս նաև ուրիշ ազգաց մէջ. բայց առ Հայս թէ ուղղիչ է այն խղճի և թէ միանգամայն գերագոյն վարժապետ մատենագրաց։ Նոյն ոճով սկսաւ և շարունակեց նաև ասորականն. յեբրայականէն՝ որ քոյր լեզու էր, օրինակը կ'առնուր, և կ'օգտուէր, ինչուան վրայ հասաւ օտար դպրոցի մը՝ հելլենականին ազդեցութիւնն, և վճիտ ու մաքուր ճուրն պղտորեցաւ։ Գերմանական ցեղից մէջ՝ գոյականն ալ՝ նոյն հիման վրայ հաստատեց չէնքը. սակայն չինութիւնն անկատար մընաց, և այսօր աւերակքն միայն են որ կը զարմացընեն զմեզ...

« Պատմութենէ կը սորվինք թէ ինչպէս Հայք շատով ետ կեցան ի գործածութենէ ասորի տառից. և իրենց կիրառութեանն համար նոր այբուբեն հնարելով, հետևողք Յահակայ պարթեւի և Մեսրոպայ, մատենագրաց անխոնջ խումբ մը կազմեցին, և յունական եօթանասնից օրինակէն՝ հնոյն, և նոր օրինաց գրոց ալ՝ զարդարուն և պերճ ոճով թարգմանեցին զաստուածաշունչ տառս։ Շատ ձեռքեր ու մտքեր անոր վրայ աշխատեցան ու յոգնեցան. լեզուն ալ պատշաճեցընելով իրեն համար գեռ ոչ սովորեալ գործոյ թարգմանութեանն. որով կարծես թէ ամբողջն մէկ ձեռքէ և գրչէ ելած աշխատասիրութիւն մ'է։ Ասոնք թարգմանիչք կոչուեցան, և հինգերորդ դարուն իրենց անունն ընծայելով՝ անոր փառքն ալ եղան։ Իրենց երկասիրած Յուրբ Գրոց ոճն՝ յաջորդացն ալ հետևողութեան և նըմանութեան օրինակ մը դարձաւ։— Նուիրականն մերժեց կամ նուազեց զարտաքին մատենագրութիւն. ժողովրդական երգերը լռեցուց, և երևակայականին պէտքը մասամբ եւեթ գոհ ուղեց ընել հոգևոր

երգով քահանայից և պաշտամանց եկեղեցւոյ. վիպասանականն կամ դիւցազնական՝ չհոչակեց իր երգերովը զարբաս և զգործս նախնեաց և զդիւցազանց. ի թատերաց հեռու փախան՝ իբրև ի տեղեաց ուր վտանգ է ապականութեան բարուց. արձակ չարագրութեան մէջ փայլեցաւ իրենց արուեստը դարձուածներովն, նկարագրութեամբք և համանուն համանշանակ բառից ճոխութեամբ։ Արձակ լեզու մը՝ որ կարծես զոհ և հաճ իրեն գեղոյն և շնորհաց վրայ, հազիւ երբեք անպատճոյճ, ազատ, համառօտ ու կարուկ կերպարանաց տակ կը ներկայանայ. քիչ է ի նմա այն երիտասարդական կորով՝ զոր դարուց ընթացքին մէջ կ՚ընդունին մատենագրութիւն և գրիչք ի ժողովրդական լեզուէ, և ի զանազանեալ՝ բայց ոչ յերկիւղածին մշակութենէ աշխարհիկ որերոյ։ Երբ տապալեցաւ ինկաւ հզօր թագաւորական իշխանութիւնն, և ստուերք մի ևեթ մնաց ի վերայ մէջերկրեայ ափանց, տխուր կերպարանք առին նաև քաղաքական կեանք, նուազեցաւ եռանդ նաև ի քահանայական դասակարգի. և մատենագրութիւն՝ ոչ ևս էր ընտիր թարգման ամենայն զգացմանց և մտածութեանց մարդոյ։

***

«Այս մտաւոր կենաց միւս այլ էջ կը ներկայացընէ մեզ գրաւորական նոր երկասիրութիւն մը[1], պատմելով թէ հազար տարուան գործունեայ շրջանի մը մէջ ինչ ընծայեցին Հայք իրենց հայրենակցաց, հաւաքելով անտի ուր աւելի կենդանի, վճիտ և առատ էին ցայտք և վտակք ջրոց։ Ուրիշ տեղ հետեւողք և նմանողք ունեցած եմք. հոս թարգմանիչք, և միայն ի նախնեաց. և որոց առջև կը բանային իրենց մտաւորական գանձերը Յոյնք, Ասորիք, Արաբացիք և Լատինք. այս վերջիններս քիչ թուով և աւելի ուշ. սակայն ամենուն մէջ նախապատիւք՝ ինչպէս արժանն ալ կը պահանջէր, Յոյնք եղած են, ուսուցիչք վեհագոյնք, թէ թուով և թէ արժէքով.

«Ի՞նչ կը սորվեցընէ Հայուն յունականը։ Եռանդուն և անհամբեր ակնարկ մը կը ձգես այս ճոխ ցուցակին վրայ, ու կը զարմանաս և կը տրտմիս միանգամայն։ Մատենագրաց ու թարգմանչաց թափած այդչափ քրտանց մէջ, քանի սակաւաթիւ և անցողաբար են իմաստասիրաց և քերթողաց բանաստեղծութիւնք։ Քիչ բան ի գրուածոց գպրոցաց պսակաւոր և իրենց պսակը կորնչցընող թագաւորաց՝ Արիստոտելի և Պղատոնի. գրեթէ ոչինչ Հոմերի, Եսքիլեայ ու Քսենոփոնի դարերէն՝ որոց վրայ այնչափ կը զարմանամք, չեն զարթնուր՝

1. Թորգոմեան է, «Մատենագրաց Հայկական թարգմանութեանց նախնեաց», Դար Դ–ԺԳ. Վենետիկ, Ս. Ղազար, 1889.

ոչ ի վսեմական ոլիմպիական երգոց, և ոչ ի բուռն զգածմանց Հիւպ-պոլիդեայ և Մեդէայ։ Ա՛յլ ցունատան մ՚է որ կը գրաւէ Հայոց սէրն ու հետաքննական ոգին. ոչ Դեմոսթենի և Խոկրատայ, այլ Ոսկեբերանի և Բարսղի. ոչ ագոնն կամ՚ հրապարակ՝ այլ տաճար. ոչ ատեանն՝ այլ խորան։

«Սակայն այս անձուկ ասպարիզին մէջ ալ ամփոփուելով, կրնանք քաղել բազմաթիւ ծաղկներ և պարարիչ հասկեր. մերթ նաև հողմավար յարդք՝ որ հրապուրիչք են, վասն զի այն դաշտին մէջ ճարտար մշակն միայն կը քրտնի։ Երբեմն ալ՝ թէպէտ ոչ այնչափ նշանաւոր և բարձր երկոց, ժամանակը սկզբնագիրն յափշտակեր է, և հայկականին վրայ՝ որ երկիւղած կոտակատար մը եղած է, կրնանք միւսանգամ ժառանգել յոյն, ասորի և հին ատուածխոսական էջեր. և միշտ ընթերցուածոց տարբերութիւն, որ հաւատարիմ թարգմանութեամբը՝ վկայութիւն մ՚է բնագրոց, և որք ուրիշ կերպով պիտի կորսուէին։ Բաց ի հմտութենէն, որ միշտ անխոնջ և ներողամիտ է՝ երբ օգտակար ըլլայ, սիրողաբար ակնարկողին և ուսումնասիրելու ետուէ եղողին համար՝ նմանողութեան գանձ մ՚ալ կը յայտնուի հոն։ Իրաւ է որ հայագիտութիւնն այնչափ բաղդաւոր եղած չէ յԵւրոպա. քիչ մշակողք ունեցած է և ունի, որք աւելի դժուարին հետաքննութեամբք կը պարապին արևելեան ուսմանց ասպարիզին մէջ, թէպէտ և ոչ դոյզն գրգիռ պէտք էին ըլլալ խաչակրաց ժամանակը լուսաւորող, ինչպէս նաև վաճառականական այլ և այլ շարժմանց կարևոր վաւերականք։

«Հայկական հին թարգմանութիւնք երկասիրութիւնն՝ մեծ օժանդակութիւն և յորդորիչ մը կ՚ուզէ ըլլալ. կը մնայ տեսնել թէ ինչպէս այդ գուռը բացած է հեղինակը, որ թէպէտ յառաջաբանին տակ միայն անուան սկզբնատառուքն նշանակուած է, բայց ամենայն ոք գիտէ թէ խմբագրողն, վանականաց սիրալիր պարզութեամբ յանուանէ զնա կոչելով՝ է Հայրն Գարեգին։

«Իր ազգին փառաց, անոր լեզուին գեղեցկութեանց հաւատարիմ ու յարատև աքանչացող մը, և որուն պարտական ենք արդէն ընտիր և ճարտարախօս Հայկական մատենագրութեան պատմութիւն մը։ Իր այս վերջին երկասիրութեան մէջ ալ ընդարձակ ոճով կը խօսի առաջին թարգմանչաց գործոյն վրայ, ասորի դպրութեանց ազդեցութեան նուազելուն, սուրբ գրոց և այն թարգմանութիւնն մինչև առ մեզ հասցնող գրչագիր օրինակաց վրայ, ցուցընելով անոնց իրարու հետ վերաբերութիւններն ու յարգը. ընտիր ու ապահով տեղեկութիւններ կու տայ եկեղեցւոյ պաշտամանց մէջ գործածական գրոց նկատմամբ, և անուանական ցուցակ մը բաղմաթիւ մատենագրաց որ թարգմանուեցան ի Հայ։ Այս օտարազգի մատենագրաց վրայ համառօտ տեղեկութիւններ կ՚ընծայէ, որչափ կրնար պահան-

ղել երկասիրութեան նպատակը. հայ վերնագրին վրայ կը յաւելու յաճախ և գլուխական. և այս մասին՝ կը ցաւէ ինձ՝ որ բառից ու շեշտերու մէջ տեղ տեղ աչք կը գոցէ վրիպանաց՝ փութալով ի վաստակն։ Ամենայն գրուածոց առաջին բառերը նշանակուած են. և երբեմն նաև յիշատակարանք որ ի վերջ գրոցն գրուած են ի հեղինակաց և կամ ի թարգմանչաց։ Անուանց և վերնագրոց՝ յաճախ նաև գաղղիականքն գրուած են՝ ի նպաստ անոնց որ հայերէն լեզուի տեղեակ չեն, չափազանց սիրելութեամբ անուշտ. լաւագոյն էր թերեւս ուրիշ լեզուի մը գործածութիւն, ինչպէս լատինականին. բայց ասոր վրայ վիճելը ոչ օգտակար է և ոչ իրաւացի։ Սակայն ուրիշ մասի մը վրայ աւելի խոժոռադէմ և խիստ պիտի երևնամ, վասն զի աւելի մատենագիտական մանրաքննութիւն փափաքելի էր տեսնել թէ հայ գրչագրաց և թէ անոնց վրայ ի հմտից եւրոպացւոց եղած գրքուածոց և տեսութեանց։ Խստապահանջ ևս յայնմ թէ նշանակուած և յիշուած գրչագիրքն ուր պէտք է փնտռել. յազգային մատենադարանին Փարիզու, թէ ի Սուրբ Ղազար կամ յԷջմիածին, ի Մոսկուա և կամ առ Անտոնեան Հարս ի Պոլիս։

«Այսպէս նշանակեցի գրչագրաց այն գլխաւոր հաւաքմունք, զորս կը յիշէ Մխիթարեանն՝ օգտուելով անոնց ցուցակներէն, յորոց միայն Էջմիածնի մատենադարանինը տպագրութեամբ հրատարակուած է ի Թիֆլիզ (1863). աշխատասիրութիւն, ոչ միշտ վերծ ի վրիպակաց, բազմերախտ Յակոբայ Կարինեանց ուսուցչի։

«Հեղինակը փափաք կը յայտնէ որ ամենայն հայ գրչագրաց ընդհանուր ցուցակ մը յօրինուի, և յայողակ և հմուտ անձինք՝ միաբան խորհրդով և առաջարկութեամբ հաստատեցնեն այս մտածութիւնը, նշանակելով նաև յօրինման կերպը. և թէ շատերը կրնան գտնուիլ օժանդակողք առ այդ օգտակար աշխատութիւն։ Ղզլարեցի (Դէղա՝ Զմիւռնացի կը համարի զնա) հայազգայ մը, Գրիգորի (զոր Գէորգ կը կոչէ) առատաձեռնութիւնք՝ տարուէ տարի ճոխ մրցանակաք կը վարձատրէ ու կը քաջալերէ հայկական ուսմանց վերաբերեալ գրուածները. ի Պոլիս, ի պատրիարքարանի Գրիգորեան Հայոց, բազմին դատաւորքն։ Ահաւասիկ, ինչպէս իմաստութեամբ կը խորհի և կ'առաջարկէ հեղինակն, ընտիր ձեռնարկ մ՝ որ արժանաւոր է և պէտք ունի օգնութեան։ Այսպէս Հայաստան կ'ունենայ, և շուտով, ինչ որ ուրիշ ծաղկեալ և բարգաւաճագոյն մատենագրութիւնք դեռ չունին. և հարկ է սնոր ձեռք զարնել ի սկզբնաւորութիւն։

«Աղէկ օրինակ մ՝է զոր կ'ընծայէ Ռերլինի մատենադարանը, իր ունեցած հայ գրչագրաց՝ ու հայու մը ձեռքով կատարելապէս կարգի գրուած ցուցակը տալով։ Եւ պիտի հարցնէ օտարազգի մը, (թէպէտ և սրբոյն Ղազարու մեր հիւրոց աւելի եղբարք ենք քան հիւրք)։

ուսմանց և խաղաղաւէտ անդորրութեան այս կղզեկին մէջ, ուր այն-
պիսի պանծալի ճոխութիւն կայ, ոչ երեսի վրայ անխնամ թողուած,
և օր ըստ օրէ աճեցուն ի ձեռն մեծանուն հմտից, ինչու ցարդ չէ տը-
րուած կամ չի տրուիր խնամքով յօրինուած ցուցակ մը։ Տպագրու-
թեամբ հրատարակուած գրոց մէջ, ի փոշեայ դուրս հանելով հին
հատորներ, կամ արդէն ծանօթ եղածները բարւոքելով, ինչու ման-
րամասն չստորագրել ամէն գրչագրաց գրութեան թուականն, հան-
գամանք և արժէք։ Ինչու Եւրոպայի անհամբեր ու կասկածոտ քըն-
նադատից չհասնիլ յօգնութիւն՝ կարգաւորեալ շարադասութեամբ
ընթերցուածոց տարբերութեան։ Երբ Մխիթարեանք, մեծարանաց
արժանաւոր ուսուցիչքն, սկզբնաւորութիւնն ընեն, այլք կը հետևին
իրենց. և նոյն իսկ այն հայ գրչագրաց համար՝ որ ի մեր մատենադա-
րանս ատ և անդր ցրիւ կը գտնուին, ի Հռովմ, ի Միլան, ի Պոլ-
նիա և ի Նէապօլիս, և թերեւս այլուր, զարժանն պիտի տնօրինեն
տէրութեան պաշտօնեայք, սրոյն Ղազարու միանձանց յանձնելով
անոնց կարգաւորութեան խնամքը, և գոհ պիտի ըլլան այս կերպով
ուսումնասիրաց ջանից օգնելով։

«Ոչ միայն գրչագրաց գործածութիւնն, այլ նաև տպագրեալ
գրոց փոխանակութիւնն գժուարին է նաև Հայոց մէջ։ Ազգասիրի Հայ-
կական բարգմանութեանց մատենադարանին հեղինակն (յէջ 49)
յիշատակելով հին վէճերն փաւստեայ բիւզանդացւոյ անձին և գրոց
վրայ, կը ցաւի որ աչքին դիմաց չունի ռուսահայ բանասիրի մը
նոր գրուածքն, և կը բռնադատուի հեղինակէն առ ինքն ուղղուած
համառօտութիւնը մէջ բերելով գոհ ըլլալ։

«Ի Թիֆլիզ հրատարակուած շաբաթաթերթի մը մէջ (Արձա-
գանք, 1885–86) բանասէրն եղիշէ Մատաթեան կը պնդէ, թէ
փաւստոս յոյն էր ազգաւ, և յունարէն շարադրեց իր գրուածքը,
ինչպէս նաև հիմայ կորսուած ուրիշ երկասիրութիւն մ՝ալ, Հայոց
հին պատմութիւնն։ Ուրիշ ազգային մը՝ ասկէ տարբեր կարծիք կը
պաշտպանէ ի Քնարական կոչուած թերթի (1888), երկու տարբերք
նկատելով այդ գրուածին մէջ, մին յոյն և աշխարհիկ անձի մը, և է
ինքն փաւստոս. և միւսն՝ ասորի քահանայի՝ որոյ անծանօթ մնացեր
է անուն. և թէ յաստորականէն եղած ըլլայ թարգմանութիւնն ի հայ՝
ի հինգերորդ դարու։ Քնարական կը խոստանայ ապացուցանել թէ
ինչպէս նախնի ասորաբանութեանց հետք կը տեսնուին ի հայում։
Պիտի տեսնենք. և հեղինակն Մատենադարանին՝ իրեն սովորական
խոհականութեամբ կը յայտնու թէ առ այժմ ոչ ոք կարէ գոհացու-
ցիչ վճիռ մը տալ։— Փափաք մ՝ալ կը մնայ մեզ յայտնել, որ այն
ամէն գրուածոց որ Հայոց քաղաքական և մատենագրական պատ-
մութեան վրայ կը ճառեն, և ի հայ լեզու տպագրութեամբ կը հրա-
տարակուին ի Փեթրպուրգ, ի Մոսկուա, ի Թիֆլիզ և ի Պոլիս, հա-

© National Library of Armenia

աքմունք մը ըլլայ, և զոր մասնաւոր ցուցակաւ տպագրութեամբ ընծայեն մեզ սրբոյն Ղազարու միանձունք։

«Բոյժ ի դէպ կը ծանուցանէ դարձեալ հեղինակն թէ այսպիսի երկք՝ ոչ երբեք կրնան անթերի համարուիլ։ 1825 ին արքեպիսկոպոսն Ցոմալեան հին հայ թարգմանութեանց վրայ շատ գովելի գրքոյկ մը հրատարակած է. մեծագոյն ևս գովութեան արժանաւոր պիտի ըլլայ այս ճոխ մատենադարանն, յորում այնչափ բազմաթիւ են կայանք և հատորք։

«Գիտէ հեղինակն թէ համազգեացը մէջ պակաս չեն որ շատ կ'ուզեն, անգո՞հքն. ինչ պիտի ըսէ մեզ օտարացս համար։ Բայց որովհետև ինքն կարող է, քննադատութիւնն՝ իրմէ ուզելու իրաւունք ունի։ Եթէ կը վստահի, ինչպէս կ'ըսէ, թէ յայնորիք լաւագոյն կերպարանք պիտի տան ատենին իր այս երկասիրութեանը, քննադատութիւնն՝ որ թէ՛ լի է մեծարանօք և թէ համարձակ, կը պատասխանէ իրեն. Ոչ՝ քեզի կը պատկանի այդ. հիմկու հիմայ յաւելուած մը միայն, որ պարապը լեցընէ, ամեցընէ, ուղղագրէ. և ի ժամանակին՝ քեզի կ'ինայ վերանորոգել և ալ աւելի գեղեցկացընել գրուածք մը՝ որ շատ գարուց ուսումնասիրաց օգտակար ու շահաւէտ պիտի ըլլայ»։

***

Է՛անցնի ապա ատենաբանն աւելի հետաքննական նիւթոյ մը, և որով զբաղին հիմայ նաև ազգային բանասէրք և քննադատք.— Ադաթանգեղայ գրոց յունական օրինակին վրայ,— ու կ'ըսէ.

«Ա՛յլ և այլ դարուց հմուտք և գիտունք՝ երկար ատեն երախտապարտ պիտի ըլլան Պաւղոսի Տրլակարտ, որ մեր ժամանակաց ամենէն անխոնջ բանասիրաց մէկն է։ Ինքն հետամուտ է լեզուաց և գրոց. պատմութեան և վիպասանաց. հմուտ յոյն, սորի, արաբ, զիտի և հայ բարբառոց, մեկնաբան հեբրայեցի և քրիստոնեայ սրբազան տառից, և տեղեակ զանազան լուսաբանող ամէն ազգի գրուածոց։ Բառական չէ նիւթոց զանազանութիւնն և արդասաւորութիւն, այլ ամէն երկասիրութեանց մէջ կ'երևցընէ համբերող ու անհամբեր խնամ ամէն բառից ամէն տառից, որ կ'ընեն զինքը խստապահանջ դատաւոր մը ընդդէմ այլոց. բայց ալ՝ աւելի խստագոյն իր անձին։ Ասով գերագոյն ուսուցիչ մը ի ստուգական ճշդութեան (ակրիպեաց). և եթէ այդ սուր աչքէն բան մը վրիպի, և ըստ բաղդի ուրիշներն անդրադառնան, ինքն առաջին է օգտուողը և գոհ ըլլոյ։

«Ադաթանգեղոսի ընծայուած Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի կենսագրութեան յունարէն սկզբնագիրը պահուած է ի միակ գրչագրի լուրենտեան մատենադարանին (Ֆլորենտիոյ)։ Ստիլտինգ՝ Բոլլանդեանց համար, և մասամբ Լանկլուա՝ Ցիւպէրի ժամանդակութեամբ,

հրատարակած էին զայն տպագրութեամբ. բայց Ցըլակարտի նոր հրատարակութիւնն ամենէն ընտիրն է, քան զոր ընտրելագոյն չէ կարելի յուսալ ցորչափ նոր բնագիրք չյայտնուին այդ կենսագրութեան։ Գիտնական գերմանացին կ'ընթեռնու, կը գաղափարէ և կրկին կ'ընծայէ զայն՝ զարմանալի հմտութեամբ. մանրամասն կը նըկարագրէ զամենայն, նաև զպատմութիւն գրչագրին վրիպանաց, կը նկատէ երկու և երեք ձեռքեր որ մագաղաթին վրայ կ'երևնան՝ այլ և այլ նշաններով ու տարբեր թանաքով, կամ՝ քերելով՝ որպէս զի անընթեռնելիք ըլլան, կամ՝ քերուածին վրայ սրբագրելով, և կամ յաւելուածովք ի լուսանցս։ Ի ստորեւս իջից նշանակուած են վրիպակք բառականք և այլն ամենայն, երկար փորձառութեամբ նաև այն հելլենական լեզուին որով գրուած է, և չէ միշտ ընտիր և դասական. Ցըլակարտ՝ անհերիւղ, բայց առանց յանդուգն յաւակնութեան, կրկին կը նորոգէ ու կը յարդարէ զընագիրն. և եթէ տարակոյս մ՚ալ ունենայ, կը յայտնէ մեզ իր երկմտութիւնն ու կասկածը։

« Որովհետև դիւրութիւն ունիմ հոս փլորենտեան գրչագիրը բաղդատելու, աչքէ կ'անցուցեմ Ցըլակարտի դրած ծանօթութիւններն, և ուր կրնամ ուղիղը նել կամ զեղծել կ'ընեմ յօժարութեամբ, զարմանալով որ այսչափ քիչ բան պարտիմ ընել »։

Դէպ՝ գրեթէ եօթանասուն սրբագրութեանց կամ ընտրելագոյն ընթերցուածոց յոյն բնագրին ցուցակ մը դնելով ի փլորենտեան գրչագրէ, վրայ կը բերէ.

« Ցըլակարտ կը կասկածէր թէ ի Մխիթարեանց եղած Ագաթանգեղայ գրոց կրկին տպագրութիւնք՝ նմանատիպք ըլլան. կրնայ ապահով ըլլալ բաղդատելով զտպագիրն որ ի 1835 և ի 1862։ Թերեւս սխալը անկէ յառաջ եկած է՝ որ վերջին տպագրին մէջ պահուած է նաև առաջնոյն պղնձի ճակատը՝ որոյ վրայ փորագրուած է 1835 թուականն։ Առաջին տպագրին մէջ գրուած համառօտ յառաջաբանը կը պակսի յերկրորդումն, յորում նշանակուած էր թէ հրատարակութեան համար գործածուած եօթն օրինակք ամէնն ալ գրչագիրք չէին, այլ հինգ միայն. և երկուքն՝ տպագիրք Պոլսոյ, մին՝ նախկինն (edition princeps) ի 1709, և միւսն ի 1824, Դոմմաղէոյի սրբագրութեամբ եղած իտալական թարգմանութեան նախաբանութեան մէջ եօթն գրչագիրք կը յիշատակուին. թէ որչափ էր այն ատեն անոնց թիւը և որչափ հիմայ՝ պիտի զրուցեն մեզ հրատակողքն. միր խօսքն է՝ թէ քանի օրինակաց վրայ եղած է տպագրութիւնն։ կարևոր է լուրջ քննութիւն մը նաև փարիզեան օրինակին։— Ընթերցուածոց տարբերութեան վրայ գրուած համառօտ ծանօթութիւնքն ալ, առ պակասութեան ընտրելագունին, ունին իրենց կարևորութիւնը, և կը տեսնուին միայն առաջին տպագրին մէջ։ Ինչու նոր ընթերցողները զրկել անոնցմէ »։

© National Library of Armenia

Քանի մը օրինակներով իր խօսքերը հաւատարմացընելէն ետքը՝ կը յաւելու Դէզա.

«Պիտի յերկարէր մեր քննութիւնը՝ եթէ զամենայն ուղենայինք մէջ բերել։ Գործունեայ հայազգի երիտասարդ մը, ուսումնասէր և հանճարեղ, կը զբաղի հիմայ Ագաթանգեղեայ գրքով. և որ պիտի ըլլայ ոչ հինգերորդ կամ վեցերորդ, այլ վերջին տպագրութիւն... Մխիթարայ ուխտին նոր պատիւ մը պիտի յաւելու այս երկասիրութիւնը, որոց այնչափ պարտըկան է ուսումնասէրն Եւրոպա[1]։...

***

«Ի՞նչ է քննասէրը, որովհետև Մատենադարանին հեղինակը փափաքելի կ'ընէ որոնել զայն և ուսումնասիրել։— քննադատական օրագիր մ'է, ինչպէս անունէն ալ կ'իմացուի, որ կը սորվեցընէ հետազօտել հայկական սկզբնագիրքը. յայտնել և ուղղագրել անոնց մէջ մուտ գտած վրիպական ընթերցուածներն, պարզ ու յատակ աշխարհաբառով, և կը հրատարակուի՝ ուստի չէր յուսացուեր, ի Ստոքհոլմ։ Վիմագիր ձեռագիր հրատարակութիւն մը, ու տպագրի վարժող օտարականի մը համար դժուարընթեռնլի, բայց սովորիլը գիւրին։ Ինչուան հիմայ միայն երկու պրակք ի լոյս ընծայուած են, և յուսալի է որ յարևելս ծաւալի ազգայնոց մէջ, և ծանօթանայ յԵւրոպա՝ որպէս զի հեղինակը քաջալերուի յօգտակար հետազօտութիւնն։ Փափագողք տպագրել, ընթեռնուլ կամ լուսաբանել հայերէն գրքերը՝ պէտք պիտի ունենան այս փոքրիկ հաւաքման, յորում՝ բազմաթիւ ուղղագրութիւնք կան՝ համառօտ և խոհական ոճով»։

Եւ իրաւադատ գովութեամբ կը հռչակէ համառօտիւ՝ հեղինակին թէ այս և թէ ազգին արդէն ծանօթ ուրիշ երկասիրութիւններն։

1. Տարեսոյ մէջ կը հրատարակուի այս գրուածքս, խորագիրն է «Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղանիքն», քննադատութիւն Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան ի Մխիթարեան ուխտէն։

ՄԱՍԻՔ

(Տես յ'էջ 345)

ԲՈՒՍԱԿԱՆԱՑ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՔ.— Թէպէտ և Մասեաց վրայ ջուրը առատ չէ, բայց այնու հանդերձ միջին գօտեաց վրայ արօտները գեղեցիկ են և դալար, վասն զի մշանջենաւոր ձեան սահմանին մօտ են; որ ամառան սաստիկ տաքութիւնը կը մեղմացնէ. բաց ասկէ առատ ցօղ կ'իջնէ և անձրև։ Միջին գօտին կը համարուի 5000 ոտք բարձրութենէն մինչև 11, 500'. ասկէ վար հիւսիս—արևելեան լանջակողմերն՝ կաւուտ և աւազուտ են, և յառաջ կը բերեն վայրենի և անմշակ երկրի բոյսերը, steppe, կարճահասակ և փշոտ, քիչ տերևներով և շատ ճիւղերով թփեր, սակաւ մ'ալ խոտեղէն ծաղկաբեր բոյսեր և սէղ, յորս նշանաւոր է Սէգն որդնաբեր, Dactylis littoralis, այսինքն անուշիչ Որդան կարմրոյ։ Վերոյգրեալ 11,500 ոտից գծէն մինչև մշանջենաւոր ձեան սահմանը եղած բարձրագոյն գօտւոյն վրայ շատ քիչ բուսեղէն յառաջ կու գայ, այն ալ մամռաձև գետնի վրայ ինկած, գետինն ալ բոլորովին քարեղէն է։ Իսկ միջին մասին կամ գօտւոյն վրայ՝ կան փրդաց ընդարձակ արօտներն, որոնք տեղ տեղ ցորեն և գարի ալ կը ցանեն, և հոն իրենց բնակութիւնը հաստատած են. բայց երբոր ձմերային ցուրտը կը սաստկանայ՝ վար կ'իջնեն 'ի ձմերանոցս, և Հայոց գիւղերուն մէջ կը ցրուին։ Փրդաց գլխաւոր արօտներն են երկու Մասեաց և Քիփկէօլ հովտին մէջտեղ գտնուած մեծ տափարակ գետնին վրայ, ուր 11,000' բարձրութեան վրայ գեղեցիկ մարգագետիններ կան ոռոգելք սառերուն հալմամբ ձեւացած լճակէն կամ ջրշեղէն. կան նաև ապաստանարանք և պահուըտելու տեղեր, մեծամեծ քարեր որք գլորած են չորս կողմը եղած հրաբուղիներէն. որով այս տեղը գիւրագոյն կայան և ճամբայ կը համարուի 'ի Մասիս ելլելու համար։ Թփատեսակ ծառեր 5000 կամ 5500 ոտք բարձրութեան վրայ հազիւ կը գտնուին. և միայն փոքր Մասեաց կողերուն վրայ Թխտենեաց անտառիկ մի կայ, գրեթէ 7800' բարձրութեան վրայ։ Աւագ Մասեաց վրայ ալ նոյն բարձրութեամբ, հիւսիս—արևմտեան կողմը այս ծառերէն սակաւ կը գտնուի։ Ֆրէշֆիլտ, որ գարնան ատեն Մասեաց վրայ ելաւ, կ'ըսէ թէ 7—9000' բարձրութեան միջոցին մէջ բաւականի առատ են ալպեան բոյսերն. և յիրաւի կարծեմ թէ ալպեան բոյսերն և ծաղիկները շատ սակաւ պիտի չըլլան, վասն զի յարմար եղանակի մէջ ադեկ կերպով քննուած չեն, այլ վեր ի վերոյ տեսութեամբ՝ կ'ըսուի թէ նման են ուրիշ լերանց բուսոց ծաղկանց. Տերեփուկ, կանթեղ-

© National Library of Armenia

նիճ, կորնգան, քարհերձուկ, Saxifraga, կոտեմ. տեսակ մը կորընգան, Cerastium ալ գտնուեցաւ, մշտնջենաւոր ձեանց սահմանին մօտ 13,000՝ էն աւելի բարձրութեան վրայ, ուր քարաքոս և մամուռներ կան։ Գուռնէրֆոր որ ի 10—11 Օգոստոսի յամի 1701 Մասեաց վրայ ելաւ, թէպէտ և ոչ ի բարձրագոյն սահմանս, բոյսերը քննելու համար, աւազուտ տեղոյ վրայ միայն Գիհի և Փշոտ խազերաև գտաւ, Astragalus massiliensis, Epine de bouc. Ակորէն դէպ 'ի վեր Ս. Յակոբայ վանքը և ադրիւրը երթալով՝ հասարակ և ծանօթ բուսոց յիշատակութիւն կ'ընէ. Ցերկնիձ, Cotonaster բոլորատերև, Լուսաղեղ կապոյտ, Conyza acris caerulea. C. B. Բգնճարիր պտղաբեր նեղատերև, Hieracium fructicosum angustifolium, Յակոբաչի, Ալքմաղիկ, Euphrasia, Թանքռնիկ, Telephium, և այլն. ուրիշ երկու ծաղիկներ ալ կը յիշէ նոր տեսակ համարելով, զորս կ'անուանէ Համասպրամ—արևելեան, Lychnis orientalis, եզնալեզու տերևով. Մարեմծաղիկ յարևելեան քարածերպի, Geum orientale, հասարակ ծնծղածաղկի, Cymbalaria, տերևոց նման տերևաձև. այս երկու ծաղկանց ստորագրութեամբ միանգամայն պատկերներն ալ կը գտնէ. և ուրախութեամբ մը կը յիշէ բարձրագոյն գրից վրայ անակնկալ կերպով գտած Վահիլիժակ, Veronica, ծաղկին տեսակը. Թանթռնեկի տերևներով, զոր Բառոդ ալ գտաւ աւելի բարձրագոյն գրից վրայ, 10—12,000 ոտից մէջ. Յամի 1834 Ապրիլի սկիզբները Ցիւպուա ալ նոյն սահմաններու վրայ տեսակ մը քրքում գտաւ, Merendera Caucasica, որ դեռ նոր ծաղկած էր ձիւնէն նոր ազատած գետնի վրայ։ Վակնէր ևս յամի 1843—1844 գտաւ նոր տեսակ մը Ջուռբրի, Alchemilla, խստոր կոճատերև, և բնիկ Արարատեան ճարտարուկ, Petrocalis Araratica. լերան աւազուտ կողմանց վրայ գտաւ, Հիրիկ իբերական, որոյ համար կ'ըսէ թէ լերկածաղկէն եղաք՝ Հայոց լերանց ծաղկանց՝ նոյն իսկ հիրիկ ծաղկանց կամ վայրի շուշանաց ամէն տեսակէն աւելի գեղեցկագոյնն է. գտաւ նոյնպէս տեսակ տեսակ ճերմակ հովանեկաձև ծաղիկներ և դեղնագոյն Լառնտաղիկ, Ranunculus։ Բառոդ հոկտեմբեր ամսոյն սկիզբները 12—13,000 ոտք բարձրութեան մէջ գտաւ կորնգան, Cerastium, քարհերձուկ մշկահոտ, Saxifraga muscoides, ոլորտ և պլղտիկ տերևներով, և քարանց ճեղքուածներուն մէջ չքնաղատես Աստղիկ լեռնային Aster alpinus, Աստղիկ գեղաղէշ, Aster pulchellus, տեսակ մը կոտեմ, Draba incompta, * Ազազուկ կոր, Arenaria recurva, * Ջանգակ ճաղիկ քարհերձուկ, Campanula saxifraga, Ակրկարնա կովկասեան Pyrethrum Caucasicum, Քշամորուք գաճաճ, Tragopogon pusillum, խազիրան կակուղ, Astragalus mollis, * Հզօրուկ, Potentilla.— 12—13,000՝ ոտք բարձրութեան միջոցը վերիններուն հետ մէկտեղ Անթեմ, Anthemis rigescens, Սինձ, Scorzonera coronopifolia, Շահո-

© National Library of Armenia

գրամ առապարի, Diantus petraeus, Բաղդր կորնգան, Hedysarum caucasicum, Ոռոյտ, Trifolium tricocephalum. մեծ կապոյտ ծաղիկներով, Վայրի կակաչ, Pulsatilla albana B. Ցերեփուկ գեղաղէշ, Centaurea pulcherrima, Ցերեփուկ դեղնասպիտակ, Centaurea Ochroleuca։— Թփոց տեսակէն 7—800' բարձրութեան վրայ գտաւ Գիհի, զոր Դուռնրֆոր ալ կը հաստատէ, և Ներկեղիձ միաճաղիկ Cotonaster uniflora։

Ադգային գրոց մէջէն քանի մը բժշկարանք կը յիշեն Արնաև խոտ, Գաւն օրուռ ըստ տաճկաց, և Ըլսմիմ պէլաթի ըստ Ազարաց, Sanguinaria, և կ'ըսեն թէ կը գտնուի «'ի Մասիսս տակն մերձ 'ի գիւղն Ակոռի»։ Նաև կը կոչուի «Ոսկի խոտ» որոյ նշանն այս է. չորս տերև ունի, և լինի սփռեալ ի վերայ գետնոյն. և տերևի երկայնութիւնն երկու թիզ է, և 'ի մէջն զէտ ճոտան, Նման ինկոզկուզակի, Polium montanum, և 'ի վերայ տերևոյն՝ ծայրերն մանտր փուչեր ունի, և կենայ 'ի մէջն կոկ վարոյ մի՝ զերթ պատճկինակ, և նորա ծայրերն կայ հինգ ծաղիկ, և ծաղկի դոյնն մէկն դեղին կարմիր, մէկն ժեռ. և թէ կտրես զայդ խոտդ՝ նա ելանէ կարմիր արիւն, և ուր հասանի այն արիւնն՝ կեղևի կոչին. երբ կտրեա՝ պատրաստ կաց որ արիւնն քեզ չհասնի. առ զիւր տերևն, չորցուր, և մանր սղէջ՝ և ձգէ 'ի վերայ արճրճի, լինի ոսկի կարմիր, և այլն։ Եւ յորժամ որ կամենաս որ առնուս զայդ խոտդ, զու դիր տուփ մի որ մնման լինի, որ կարես առնուլ»։ Ուրիշ բժշկարան մ'ալ կ'ըսէ թէ այս բոյսը կը գտնուի Գեղամայ ծովուն արևելեան կողմը, և կեղուայ լերանց վրայ։

Թուի թէ Մասիս լեռը շնչաւոր արարածոց շատ բնակութիւն տըւած չէ, թէպէտ և իրմէ ի՝ած են ամէն տեսակ կենդանիք՝ նոյեան տապանին բացուելովն.— գեռնոց և ճճեաց մէջ կարիճք և մողիզք լեռան ստորոտը յոյժ շատ են, բայց վերին կողմերը գեռ ես միջատ չտեսնուեցաւ. իսկ վակնէր ստորին և աւազուտ մասանց վրայ տեսակ տեսակ միջատներ գտաւ, և ինչպէս ինքն ալ կ'ըսէ, շատ ուրախացաւ գիւտին վրայ. գտածներէն շատերը՝ ծովու և գետոց աւազուտ սահմանաց սեպհական բաներ են. վակնէր շատ անգամ կը յիշէ Սև-իրան, Melasome, մանաւանդ Ցոյր կոչուած տեսակէն. կը յիշէ ևս Tentyria, Blaps և Crodius կոչուածները. տեսակ տեսակ միջին և հարաւային Եւրոպիոյ թիթեռները, հասարակ թիթեռն կառին Pepilio Cardui, և Մաքառ՝, Pop. Machaon կոչուածը։ Բայ ի Ազգաւէն, Անգղէն, Արծուէ և տեսակ տեսակ բազէներէ ուրիշ մեծ կամ փոքր հաւեր չտեսնուեցան։ Բայց Գինոյ գետոյն ստորին կողմերը շատ առատ են ջրահաւք, ձայք, Հոդամաղք, Արագիլք, Դարապ վայրի, Փոր, Բադ, Ջրհնաւ Աքլոր սևաթև, Himanotopus melanopterus, Քաջահաւ, և այլն։

Զորքոտանեաց ցեղէն ծանօթ են Նապատտակ, մեծեղջիւր Ոչինք

Ovis musimon, և վայրի Այծեվուռնք, Capra aegagrus. Գազաններէն,



Հանաստրատ Մասնաց հզևաշեզոռեան։ տերևօք, բստ Պուռնիֆորի

Արջ, Գայլ, Լուսաստն, պզտիկ Աղուես, որ 14,000՝ բարձրութեան

© National Library of Armenia

վրայ ձեռնց սահմանին մօտ ալ տեսնուեցաւ, կատու վայրի, կուզ և ցուվազ. ըստ ոմանց ինձ ալ և վագր. Դուռնըֆոր իբրև ականատես կը յիշէ վերջինը. բայց արդի քննիչք կը տարակուսին. վասն զի իրենցմէ ոչ ոք տեսաւ վագր, սակայն գիտնական ճանապարհորդը 'ի սկիզբն ԺԸ դարու այնչափ ստէպ կը խօսի Մասեաց վագրնեբուն վրայ, թէ ինչպէս թակարդներով անոնց ձագերը կը բռնեն և Պարսից Շահին կը տանին՝ որ հաւանականաբար կարծեմ թէ այն գազաններէն կան Մասեաց վրայ, և եթէ ոչ հիմա՝ բայց Դուռնըֆորի ատեն կային։ Նոյնպէս և Մորիէ այս դարուս սկիզբները կը հաստատէ թէ ոչ միայն պզտիկ վագրներ կան հոն, այլ և Ագռիզ, և ամենէն աւելի սարսափելի մեծամեծ Օձեր, յորոց այն ժամանակները վիշապ մի դուրս ելնելով երկու Մասեաց մէջտեղ, կարաւաններուն անցքը կը վախցընէր։ Հարկ է յիշել հօս մեր նախնեաց աւանդած երկու մեծամեծ որսականները «զԿիևձ և զիշավայրի, զակամբք Գինայ»։ Մինչև հիմա շատ բազմաթիւ են կինճք Մասեաց սառոտը երասխայ շամբին մէջ, բայց իշավայրիք կամ ցիռք հիմա այս կողմերը տեսնուած չեն, թէպէտ և հաւանական է թէ հին ատեն այս չորքոտաններն կը թափառէին մինչև Գինայ ակունքը, այսինքն Ակռուոյ և Թաքեալդուի (Գինոյ բլրոյն) մէջտեղ։

Վանականն տեսիլ Մասեաց.— Վերջին Երբահայեաց այցելուն Մասեաց Պրայս՝ կը համարի թէ Մասեաց միակ գեղեցկութիւնն է անոր ահեղաձայն կերպարանը. իբր բսել կ'ուզէ թէ ուրիշ ամէն բանով՝ դրիցը վայելչութեամբ, բուսական և կենդանական արգասեաք և ջրոմն՝ աղքատ և խեղճ է այս լեռը, և սովորաբար տգեղ և տձև։ Վերոյիշեալ բուսաբաններն փառնկ ճանապարհորդը խստագոյն կերպով կը գրէ, և երկրիս ամէն կերպարանքներէն աւելի խոշորաձև կ'անուանէ զայն. իսկ խորանդուռդ վերին համար ալ կ'ըսէ թէ քան զայլս ամենեսին ահաւոր է։

Շարունակելի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱԻԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

(Տես յէջ 325)

Հրէաստան։— Երուշաղէմ։— Իւր անուանը։— Ընդհանուր ակնարկ։— Շրջապատին պարիսպներն։— Թիւ բնակչաց։— Դռներն։— Ջրոս բլուրներն։— Հասարակաց հրապարակներ։— Ճամբաներ։— Ժողովարաններ։— Ցիշատակարանք։— Աշտարակք։— Հերովդէսի պալատն։— Անտոնիա աշտարակն։— Առազանք։— Ջիթենեաց լեռն։— Անեայի վանաձևանց։— Կեթսեմանի։— Բեթանիա։— Երիքով։— Յորդանան։— Մեռեալ ծովն։— Բեթղեհեմ։— Եափա։—

Երուսաղէմի ընդհանուր կերպարանքն լեռնային է։ Հողն կոպտուտ է, երկիրն ցամաք և չոր, և եթէ հակապատկեր զանազանութիւնն Հրէաստանի և Գալիլիայ հիմայ ևս յայտնի է, դեռ աւելի աչքի զարնող էր առջի դարուն մէջ։ Գալիլիայի մէջ բնութիւնը փոփոխակի գեղեցիկ էր կամ վսեմ, ընդամեն ուրեք հարուստ և առատ, արգաւանդութեամբ երկիրն աքանչելի, ջուրն առատ, դաշտերն լաւ մշակուած. բոլոր երկիրն ամբողջովին անտառաշատ։ Հրէաստանի մէջ խորդուբորտ, ցամաք և անմշակ լեռներն իշխող էին և ընդհանուր ազդեցութիւնն էր չոր ցամաքութիւն և ամայութիւն։ Մայրաքաղաքն էր Երուսաղէմ, Պաղեստինի ամենամեծ քաղաքն, կրօնական իշխանութեանց աթոռանիստն, կեղրոն աստուածպաշտութեան և հասարակաց կենաց, քաղաքն որ անմիջապէս աչքերն իւր վրայ կը քաշէր։

© National Library of Armenia

Ցասուերկու ժամ ծովէն հեռու և ութ ժամ Ցորդանանէն հեռու է գրիւք։ Ծննդոց գրքին մէջ (Գլ. ԺԴ. 18) Երուսաղէմ կոչուած է, և ահա հրէական աւանդութիւնն այսպէս կը պատմէ անոր անուան փոխուիլն. «Աբրահամ երեք դրաւ այդ տեղոյն անունը և Սէմ Սաղէմ կոչեց զայն։ Եւ Աստուած ըսաւ. եթէ երեք անուանեմ, արդարը Սէմ չ'խոտորժիր, և եթէ Սաղէմ կոչեմ արդար Աբրահամուն գժուարը կուգայ։ Ուրեմն ես անոր կը դնեմ այն անուններն՝ զոր իւրաքանչիւրն տուեր է անոր»։ Սկսինք քաղքին ամբողջութեան տեսարանը որոնել առջի դարուն մէջ, և առ այս ելնենք Զիթենեաց բլրոյն վրայ, բեթանիա տանող ճամբան բռնենք և նայինք Երուսաղէմի վրայ ինչպէս կ'երևի ճիշդ այն տեղն՝ որ Յիսուս նայեցաւ անոր Արմաւենեաց օրն և լացաւ անոր վրայ։ Առաջին ազդեցութեամբ ամուր քաղաք մ'է, գրեթէ անառիկ։ Թանձր և բարձր պարիսպ մը կեդրոնեան ձորէն անդին, ամրացած է աշտարակներով պարիսպն և յալ ու ձախ կ'երկրննայ դէպ արևելք և արևմուտք ամբողջ քաղաքն պատելով։ Աշտարակներէն ոմանք բարձր են քան զայլս. մանաւանդ երեք ահագին աշտարակներ կան որոնք քաղքին միւս կողմէն հեռուէն կը տեսնուին։ Շրջապատ պարսպին մէջ կ'երևի խումբ խումբ տանց կոյտն, մէկմէկու կից դիմացէ դիմաց. տուներն յարկ չունին այլ հարթ տանիքներ և ճերմակ քարէ քառակուսիներ կը կազմեն, որ կը նկարուին կապոյտ երկնից վրայ։ Իրարու անհաւասար են բարձրութեամբ, ըստ որում շինուած են գետնոյ կամ բլրոնց վրայ։ Վերջապէս երկու վիթխարի շէնքերն քաղքին վրայ կը տիրեն. Ցաճարն և Հերովդէսի պալատն։ Ցաճարն բերդ մ'է, մանաւանդ բերդաքաղաք մ'է քաղքին մէջ։ Զինքը շրջապատող ահեղ պարիսպներէն անդին հաղիւ կը նշմարուին իրարու յաջորդող բազմաթիւ օրմնափակեր կամարակապ սրահներով շրջապատուած, և հիւսիսային ծայրն՝ դիտողին յաջակողմն՝ կը նշմարուի սրբութիւն սրբոցն, ոսուն բարձրաբերձ տանիքն ամբողջովին՝ ոսկեզօծեալ կաթողիկէնեբով պատապարուած է։ Վերջապէս սրբութեանց սրբոց ետեւի կողմն՝ տաճարէն զատուած՝ բայց այն հեռաւորութեամբ որ կարծես թէ տաճարին կից է, կը բարձրանայ այլանդակ խորանարդ մը որուն վերին հարթ տանիքն կը տիրէ նուիրական տեղոյն ամբողջ ներքին գատիկոններու վրայ։ Այս է Անտոնիա աշտարակն։ Թալմուտներն կ'ըսեն, «Երուսաղէմ՝ չտեսնողն, գեղեցիկ քաղաք երբէք չէ տեսած»։ Իսկնանք հիմայ Զիթենեաց լեռնէն, մտնենանք քաղքին և ներս մտնալէն առաջ անոր շրջապատը զննենք։ Ահագին պատ մը լի դռներով կը պատէ չորս կողմէն. կը շրջապատէ զբլուրն որուն վրայ շինուած է Ցաճարն, կը փակէ զԵրուսաղէմ հարաւէն, Սիոն բլրոյն չորս կողմն ալ կը պրտրտի որ ի հարաւ արևմուտքն է, կ'երկրննայ դէպ ի հիւսիս, և ուղիղ անկիւն մը ձևացընելով որոյ գագաթան վը-

բայ չինուած է Հիպպիկոն աշտարակն, կարծես քաղաքը կը մնոնայ և ուղղակի կ'երթայ կը միանայ տաճարին արևմտեան պատին հետ։ Հին շրջապատ մ"է այս, որոյ վերջին մասն հիմայ անօգուտ է, որովհետև քաղաքն ընդարձակուեր է թաղով մը դէպ ի հիւսիս, որ Ա.բրա կամ տարին քաղաք կը կոչուի։ Նոյն իսկ այս թաղն պատով մը շրջապատուած է, որ իւր մէջ կը փակէ թաղումն ի միասին կուսակալին պալատն և Անտոնիա աշտարակն. վերջապէս անդին միշտ դէպ ի հիւսիս՝ դեռ կ'ընդարձակուի քաղաքն։ ցան ու ցիր և արդէն իսկ բազմաթիւ տուներ Պեզէթա կոչուած բլուրն կը ծածկեն, և քանի մը տարիէն Հերովդէս Ագրիպպա Ա. երրորդ պարիսպ մը պիտի չինէ, որ Հիպպիկոն աշտարակէն սկսեալ պիտի շարունակէ առջի շրջապատն, իւր մէջ պիտի առնու մեծ միջոց մը երկրի, ի մէջ որոց և հողն ուր է Գողգոթա, և Բեթհեզդա աւազանին մօտ պիտի միանայ առաջին շրջապատին հետ և գրեթէ մօտ տաճարին։

Յիսուսի ատեն այս շրջապատն չինուած չէ և Գողգոթա դեռ դուրս է դռներէն։ Երից պարսպաց խիստ որոշ զանազանութիւնը մենք Յովսեպոսէն կ'առնունք։ Երրորդը Յիսուսի օրով չկար, առաջին միայն էր և երկրորդն անդ՝ ուր առաջին բանի չէր գար։

Շրջապատերն հիանալի կերպով չինուած էին. պատերն արուեստով դուրս ցցուած և ներս գնացած էին։ Առաջինը ամրոցներով պատրաստուած է և վեցտուն աշտարակներով ամրացած, որոնք իրարմէ զատուած էին երկուհարիւր կանգուն միջոցաւ (90 մէտր)։ Երկրորդ պատն այս աշտարակներէն տասնուչորս ունի և յետոյ ժամանակաւ Ագրիպպայ պատն ինն ըսուն պիտի ունենայ։ Յովսեպոս կ'ըսէ, քաղաքն երեսուն երեք ասպարէզ շրջապատ ունի, որ մօտ եօթը հազարամէտր կ'ընէ, բայց պէտք չէ մոռնալ որ այս չափին մէջ չէ Ագրիպպայ պատն, որ առջի դարուն կիսուն չինուեցաւ։

Յիսուսի ատեն քաղքին բնակչաց թիւն որչափ կրնայ ըլլալ. զայն գիտնալն դժուար է։ Արևելքի մէջ աշխարհահամար ընելը գրեթէ անկարելի է, նոյն իսկ մեր օրերն։ Աղդի Գահիրէի բնակչաց համար, օրինակի աղագաւ, առ նուազն երկու հարիւր հազար և առ առաւելն վեց կամ եօթն հարիւր հազար կը դնեն։ Երուսաղէմի համար հին վկայութիւնք գրեթէ բոլորովին կը պակսին։ Կիկերոն իւր մէկ նամակին մէջ զերուսաղէմ « Գիւղակ մը » կ'անուանէ (առ Ատտիկոս)։ Ի հակառակէն Նիկոլաէոս արգերացի, Յովսեպոսէն վկայ բերուած, բնակչաց թիւը Մեծին Աղեքսանդրի ատեն հարիւր քսան հազարի կը հանէր։ Մենք այս թիւն շատ չափազանց չենք համարեր։ Այս թիւն առ առաւելն է. իսկ առ նուազն կրնանք այսպէս դնել. արդի քաղաքն հազիւ տասնուհինգ հազար բնակիչ ունի. եթէ առնունք այս թիւն և այն միջոցն զոր հին շրջապատներն կը պրաւէին, առ նուազն հին քաղքին չորս անգամ տասնուհինգ հազար բնակիչ

տալու է, այսինքն է մօտ վաթսուն հազար. Երուսաղէմ ուրեմն ու-նէր առ նուազն վաթսուն հազար բնակիչ, և առ առաւելն հա-րիւր քսան հազար։ Պ. Ռէնան յիսուն հազար միայն կ'ըսէ. այդ թիւն շատ քիչ է։ Արևելյոց արտաքոյ կարգի դիւրութիւն բնակելու նեղ միջոցի մը մէջ հաշուի չառներ այս մատենագիրս։ Պ. Շովէ կը համարի ութսունէն ինչուան հարիւր հազար հոգի, որ ինձ համար շատ ճշմարտանման է։ Ցօներու առթիւ բնակչաց թիւն կ'աճէր տա-բապայման համեմատութեամբ։

Պ. Հոսրաթ Պասէքի տօնին առթիւն ինչուան երեք միլիոն կը հա-նէ թիւն։ Իրաւ է որ այս ատեն ժողովուրդն երկրին ամէն կողմերէն հոն կը թափէր խուռն բազմութեամբ։ Ճամբաներու վրայ և դաշտե-րու մէջ վրաններ կը կանգնէին. անմիջական շրջակայ տեղերն բռնը-ւած էին։ Այս դէպքն կը հասկցնէ մեզի թէ ինչու Յիսուս իւր կե-նաց վերջին օրերն ամէն իրիկուն քաղքէն կ'ելլէր և գիշերն ի Բե-թանիա կամ ի Ձիթենեաց լեռն ագարակի մը մէջ կ'անցունէր։ Երու-սաղէմի մէջ բնակելու տեղ չէր գտնէր։ Խաչին շորս կողմն ալ, որ գը-բանց գիմաց կանգնուած էր, շատ բազմութիւն կար։ Պաշարման ժամանակն Երուսաղէմի ներքին բնակիչն գէթ միլիոն մը կար։

Դեռ շրջապատին վրայ խօսեցանք. ներս մտնենք առաջ դռները դիտենք։ Ամէն մէկ դուռն պատին թանձրութեամբ կամարաձև անցք մ'է բաւական խորութեամբ և երկու կողմէն կը գոցուէր ինքնափակ դռներով. Ցաճարի բոլոր դռներն ալ այսպէս շինուած էին։ Կամա-րին վերև լայնարձակ սենեակ մը կար ուր կրնային կենալ պահա-պանք դրան։ Դրական բան մը չենք գիտեր թէ քանի դուռ կար և թէ դռներն ինչ կերպով դասաւորուած էին։ Ռէլան Պաղեստինի վրայ գրած հռչակաւոր գործոյն մէջ շատ դռներ կը յիշէ, բայց ա-նուանց ցուցակ մ'է միայն. 1⁰. Հին դուռն Հիւս. Արևելք. 2⁰ Եփ-րեմայ կամ Բենիամինի դուռն ի Հիւսիս. 3⁰ դուռն Անկեան Հիւս. Արևմուտք. 4⁰ Դուռն Ձորոյն. 5⁰. Դուռն մսխրոցի, 6⁰ Դուռն աղբեր 'ի հար. արևելք։ Դուռ մը միայն կը ճանչնանք մեք. դուռն մսխրո-ցի զոր Նեեմի (բ. 13) կը յիշէ և էր արդի Մոկրապին դռան մօտ տեղն։ Եսեսանց դուռ ալ կոչուեցաւ։ Ուրիշ դռներ կան զոր Ռէլանա չ'ըսէր։ Դուռն պարտիզաց (ճէննաթ) յարևելս, որուն քովն էր Գողգոթա։ Երկրորդ պարիսպն Ակրան կամ ստորին քաղաքն պաշտ-պանող այս դռնէն կը սկսէր։ Դուռն այս անունը կ'առնուր Երուսաղեմի այս կողմն բազմաթիւ պտղատու ծառերէն։ Առջի դարուն մէջ այս պարտէզներն կ'անհետանային հետզհետէ և վրան տուներ կը շինէին։ Քանի մը տարիէն ետքը այս տուներն Ագրիպպաս քաղքին մէջ կ'առ-նէ երրորդ պարիսպն շինելով։ Այս պարտէզներն շատ անհարթ հո-ղերու վրայ կը գտնուէին. հոն շատ այրեր և ժայռեր կային. ուստանք հարուստ մարդկան կալուածներ էին։ Մէկուն տէրն էր Յովսէփ արե-

մաթացին, անդամ Հրէական ատենին (Sanhedrin), և հոն փորել տուած էր ժայռին մէջ գիրեզման մը իրեն և իրենցներուն համար. Գ. զդոթա ճիշդ հոն էր, շրջապատին առաջին և երկրորդ պարսպէն կազմուած անկեան մէջ, ի Գլուխ ճանապարհաց հին և նոր քաղքին և պարտիզաց այդ դռնէն քանի մը քայլ անդին, որ անշուշտ այն էր ուսկից դուրս ելաւ Յիսուս՝ Սիմոն կիւրենացւոյն հետ խաչը շալկած։ Գիտենք որ ձկանց դուռ մ'ալ կար (Բ Մնաց. Լգ, 14), առանց կրնալու տեղն որոշել. այդ դրան քովն էր ձկնավաճառանոց, Տիրեբրեայ լճէն ձկնորք կը բերէին և Տիւրացիք կը վաճառէին (Նեեմի ժգ. 16)։

Տաճարին ետևը յարևելս՝ հիմայ Ս. Յոհաննոս անունով դուռ մը կայ՝ կը կոչուէր երբեմն դուռն ոչխարաց. Բեթհեզդա աւազանն շատ մօտ էր, և անկէ կ'անցնէին զոհուելու ոչխարներն։ Սիրելի է ըսել որ Ս. Յովհաննու աւետարանի ժ. Գլխոյն մէջ պատմուած տեսարանն այս դրան քով հանդիպած է։ Յիսուս կը տեսնար ոչխարաց ելլել և մտնելն, և իւր սովորական ոճովն, պարզ իւր աչքի դիմաց անցածն կ'ակնարկէր ըսելով. «Ես եմ դուռն ոչխարաց»։ Արևելեան կողմն գլխաւոր ելք էր քաղքին այս դռնէն, տաճարին մօտ էր և կից։ Յիսուս մտաւ անդադար և ելաւ քաղքէն այս դռնէն։ Այս դռնէն անցաւ աւագ հինգշաբթի, երբ Երուսաղէմէն ելաւ Զիթենեաց պարտէզն երթալու, ուր բռնուեցաւ։ Ոչխարաց դրան տեղէն աւելի հեռու և նոյն կողմը հիմայ Հերովդէսի տաճարին աւերակաց դերբուկ մը կայ, մուտք մը հիմայ պատով գոցուած որ Ոսկեդուռն կոչուի։ Անկէ կը մտցուէր տաճարին ներսերն. և զի դուռն կեդրոնեան ձորոյն վրայ և դէպ ի Զիթենեաց լեռն կը բացուէր, շատ հաւանական է որ Յիսուս անկէ անցաւ Արմաւենեաց կիրակին։ Երուսաղէմի միւս դրանց վրայ չենք կրնար որոշ բան մ'ըսել, որոնց անուններն կ'ըսեն մեզի Նեեմի և ուրիշ հին կաւակարանաց գրիչներն։ Ի հարաւ չկար, Սիոն լեռն անկէ անմատչելի էր։

Շարունակելի

ՈՍԿԵԴԱՂԻԿ ԿԱՄ ՆԱՐԳԻՍ

Զրոյց մը

Խեղճ մայրը...

Աղքատ էր և հիւանդագին. ամուսին մը ունէր որ չէր ուզեր աշխատիլ, ու արբեցութեամբ՝ քաղցը մոռցընել կը նայէր։ Գինովցած տուն դառնալով՝ անխնայ կը գանակոծէր կինը թէ ինչու այդ խեղճ ձեռաց աշխատանքովը չէր կրցած կերակուր մը պատրաստել իրեն։

Բայց իր աղքատութեան մեծագոյն տառապանքն այս չէր։ Պզտիկ հասակէն վարժած էր անտարբեր ու արհամարհոտ աչքով մը նայիլ աշխարհի վրայ՝ ուր իրեն նմանիք կարծես թէ ուրիշ բանի համար եկած չեն՝ բայց անօթութիւն կրելու և ծեծ ուտելու։ Ցզայութեան ատեն հայրն էր զինք ծեծող, իսկ հիմայ ամուսինը։

Չէ, քաղցը չէր զինք թշուառ ընողը, և ոչ ծեծն իր սիրտը կոտրտողը։ Զաւկի մը սէրն ունեցած էր, սիրուն ու գեղեցիկ զաւկի մը՝ որ իրեն աչքին գեղեցկագոյն և սիրելի էր քան զամենայն մանկիկս մեծատանց՝ զորս կը տեսնէր ճոխաքար զարդարուած, հագուած սըգուած։ Գիսակ իր ուրախութիւնն ու հարստութիւնն էր. իր բոլոր աշխարհը։ Անոր համար սիրով կը համբերէր անօթութեան, կը տանէր դանից ամուսնոյն, կեանքն իրեն հաճոյ էր։

Ութ ամիս յառաջ, միայն քանի մը օրուան հիւանդութեամբ, Գիսակ փողացաւով մեռեր էր։

Որոնն յուսահատ ու անմխիթար ցաւէն ինքն ալ հիւանդանալով, մահուան ու կենաց մէջ ամիս մը անցնելով ի հիւանդանոցին, կրկին դարձեր էր ի տուն, ի կրել և ի նեղիլ։

Էրիկը՝ գրեթէ գոհ որդւոյն մահուանը համար, մերթ ընդ մերթ ուսերը վեր վերցընելով ու վայրագ ժպիտով մը կ'ըսէր. «Ի՞նչ ՇՏաս. անօթի մը պակաս աշխարհիս երեսէն»։

Իսկ խեղճ մայրը՝ ինչպէս ութ տարի յառաջ միայն Գիսակայ ուրախութեամբն ու կեանքովը ապրեր էր, հիմայ ալ կ'ապրէր միայն անոր մահուան ցաւով։

Դժնդակ ու հանապազօրեայ աշխատանք՝ որով բռնադատուած էր ոգեպահիկը ճարել, թոյլ չէր տար իրեն՝ բայց միայն կիրակի օրերը այցելութիւն մը ընել այն փոսին ուր կը ննջէր Գիսակ։ Երկաթեայ խաչ մը գնելու համար՝ հարկ եղած էր գրաւի դնել հարսանեկան մատանին ու օղերը. գեղեցիկ խաչ մը, որ իրեն համար եկեղեցի ու արքայութիւն մ'էր։ Փափաքելի էր՝ հոն իր սիրելի զաւկին քով, զինք ծածկող հողոյն տակ ննջել ու հանգչիլ։

Կիրակիէ Կիրակի ծաղկանց փունջ մը կը տանէր, ոչ ծաղկավաճառաց խանութէն գնուած,— զի չէր կրնար,— այլ անոնցմէ զոր Աստուած դաշտերուն մէջ կը ցանէ, ու կը բուսնին կը ծաղկին ի ցանկապատս և յանցս ճանապարհաց։

Թշուառ մայր։

Իր գտնուած երկրին մէջ վաղահաս է ձմրան եղանակը. և Նոյեմբերի երկուքին, մեռելոց յիշատակին նուիրուած այդ օրը, չէր գտնուեր ծաղիկ մը դաշտաց մէջ, ճանապարհաց անցից վրայ՝ ուստի տոլոր էր քաղել։

Չէր ուզեր, չէր կրնար առանց ծաղկի թողուլ այն օրը իր սիրելի ու վաղամեռիկ Գիսակը։

Ուստի կանուխ՝ արշալուսի բացուելուն ելաւ տնէն. ծաղկավաճառի մը գնաց, հարցուց թէ ի՞նչ կ'արժէր թառամած տալիաներով կապուած փունջ մը։

Տասը դահեկան, ըսաւ։

Տասը դահեկան. պատասխանեց կինը։ Պարտքով տուր ինձ դայն, և ես խօսք կու տամ կամաց կամաց վճարել։

Ծաղկավաճառը կարեկցութեամբ դլուխը շարժեց, և դարձաւ գոհ ընել անկէ նոսա աղքատներն որ պարտքով չէին ուզեր գնել ծաղկի փունջ մը։

Քալեց բոլոր քաղաքը. տեսաւ խանութներու մէջ ի տես և ի վաճառ դրուած կամելիաներ, վարդեր, մանուշակաց ու անմեռուկ ծաղկանց փունջեր։ Այնչափ ծաղկանց առատութեան մէջ չի կար իրեն համար, իր Գիսակին գերեզմանին վրայ դնելու ծաղիկ մը։

Կառքերը կանգ կ'առնուին վայրկեան մը ծաղկավաճառաց կրպակներուն առջև. ագռաւեաց արք և կանայք կ'իջնէին դնել վարդեր, անմեռուկ ու ինչուան գարդենիա ծաղկանց փնջեր։ Իսկ խեղճ մօրը, իր սիրելի որդեկին համար չկար և ոչ ծաղիկ մը։

Խանութներուն դրան քով կեցած էր, ու պիտի չքաշուէր նաև ողորմութիւն խնդրելէն, որպէս զի գէթ փունջ մը, ծաղիկ մը կարենայ դնել Գիսակին վրայ։

Սեւազգեաստ օրիորդի մը, ուրախութենէ ինքիրմէ դուրս ծաղկավաճառին կրպակէն կ'ելլէր՝ պզտի բաղկացը մէջ գրկելով ու հապիւ կարենալով վերցնել մեծ փունջ մը գեղեցիկ ծաղկանց՝ որ հարիւր դահեկանի արժէք ունէր։

Հառաչեց խեղճ մայրը, ու հագիւ արտասուքը բռնելով՝ մեղմաձայն ողբաչեց. Սիրուն օրիորդ, տուր ինձ ծաղիկ մը, վարդ մը միայն իմ Գիսակիս համար։

Օրիորդը և ոչ լսեց, այնչափ զբաղած և գոհ էր ձեռքի փունջը ցուցնելով քրոջը որ կառքին մէջ նստած էր. Ցեռ, կ'ըսէր, որչափ մեծ է. հարիւր դահեկան վճարեց մայրիկս։

Ու կապքերը ետեւէ ետեւ խռնուած կը յառաջէին դէպ ի գերեզմանատուն. ամէնքն ունէին ծաղկունք ու պակներ զոր կը տանէին իրենց սիրելի մեռելոց։

Կ'երթար հետիոտս խեղճ մայրն ալ, ու չունէր ծաղիկ մը, և ոչ իսկ դաշտաց ծաղիկ մը իր անմոռանալի Գիսակին համար։ Ընմիսիթար ու յուսաբեկ, արցունքն ալ պակսեցաւ իրեն։

Հազիւ քաղքին դրան բով մօտեցած, մէկէնիմէկ կանգ առաւ կեցաւ. ու իր լոին ու բուռն ցաւոց մէջ՝ որով տեսնողին կարեկցութիւն ու սարսափ կ'ազդէր, ժիտ մը փայլեցաւ երեսը. մանաւանդ թէ գոհ և ուրախ ծիծաղ մը. աչքերը լեցուեցան արտասուաք։

Որդեակ սիրելի, կ'ըսէր, դու ալ պիտի ունենաս քու ծաղկներդ այլոց նման։

Ու արագ արագ քայլափոխով տուն կը դառնար։

Եւ այն աղքատին յարկին տակ՝ ուր կարեւորն կը պակսէր, ուեւլորդ բան մը միայն կը գտնուէր։ Վառարանին վրայ՝ ապակեայ զանգակով ծածկուած՝ հինուսին լաթերու կտորուանքէ շինուած ծաղիկ մը կար, ժամանակէն գոյնը կորուսած, բայց դեռ ևս պեղեցիկ, որովհետև երկու սերնդեան խնամատ երկար սիրոմբ պահպանուած էր։ Ընուեստական ծաղկունք էին՝ զորս անմիսիթար կնոջ մայրը ընծայ ընդուներ էր յամուսնոյն՝ իրենց հարսանեաց օրը, և ժառանգութիւն ձգեր էր գտերը պատուիրելով որ աշխարհի գնոմբն ալ չծառայցընէ զայն. որովհետև բաղդ բերող՝ սիրոյ յուսաւորք մ'էր։

Ա.յդ աղքատին ու անշուք փնչիկ՝ տունէ տուն անցեր էր, լուսվկայ մը այնչափ վշտաց, տառապանաց և արտասուաց։

Մայրը՝ ինք իրմէ դուրս ելած, դողալով դողդղալով, մեծ յանցանք գործողի մը նման, վեր վերցուց ապակին, երկիւղալից ապտնապով մը տաւ ծաղկներն, առաջին անգամ գողութիւն մը վախով, վազեց վար ինչաւ սանդուխէն, ու գերեզմանատան ճամբան բռնեց։

Երկին ու կրկին կը համբուրէր, յուսալով թերեւս որ կարենայ ջերմացընել իր սիրով լի ցաւերովը, և միւսանգամ կեանք տալ այն ծաղկանց։ Մերթ ընդ մերթ համբուրելէն դադրելով, Մայր իմ, կ'ըսէր, գիտեմ որ պիտի ներես այս յանցանացս. Գիսակ ալ պէտք է որ ունենայ իր ծաղիկը. ու մեռելոց քաղցր ու սիրալիր յիշատակին նուիրուած այս տխուր օրուան մէջ՝ քեզմէ, իր մայրէն, պիտի ընդունի զայն։

Նոյն պահուն կ'անցնէին կապքեր՝ ծանրաբեռն մշտադալար պըսակօք, վարդիւք, գոյնզգոյն, քաղցրահոտ մանուշակաբ սր օդը գարնանային բուրմամբք կը լեցընէին։

Գերեզմանատան դրան բով բռնադատուած էր կանգ առնուլ խեղճ կինը, բազմախուռն և աղմկալիր ամբոխէ մը արգիլուելով։ Ո՛ր-

չափ սակաւաթիւ էին արտասուողք, և բազմապոյնք անոնք որ աւելի զբաղած կ'երևնային իրարու ագոյ հանդերձանքն ու արդուզարդը դիտելով։

Այդչափ գեղաղէշ ծաղկանց մէջ կարծես թէ խեղճ մայրը կ'ուզէր պահել ուրիշներու աչքէն իր փունջը՝ ամաչելով մը անոր անշուք աղքատութեան վրայ։

Վերջապէս կրցաւ մտնել ի գաշտն մահու, գտաւ իր խաչը, խոնարհեցաւ ինկաւ ի գետին ու չէր դադրեր յարտասուաց, որ այնչափ ազդու են բարեզգած արտից վրայ։

կապեց խաչին վրայ բերած ծաղկները. ու համբոյրները կրկնելով, կ'ըսէր ու կու լար. Մայր իմ, ներէ ինձ. մեր Գիսակին համար է. ինք ալ կը փափաքի ունենալ իր ծաղկունքը։

Գիսոնն ու խառնիխուռն մաղերով խոնարհեցաւ ինկաւ այդ օրհնեալ ու նուիրական հողոյն վրայ, ուր վերջին խոսք կը դեղնէին մահուամբ, և զոր չէին կարող ի կանաչութիւն փոխել խեղճ մօրը երկար ու խանդակաթ արտասուք։

***

Մեծ ցաւերն, ինչպէս մեծ գորովանք՝ բնութեան մէջ հրաշքներ ալ կրնան երևցընել։

Այն հին ծաղկները, զոր մայր մը ժառանգութիւն ձգեր էր դըստերը՝ իբրև յուռութք մը, բաղդի առհաւատչեայ մը, և սա՝ արտասուաց և հառաչանաց անմեղ ու սիրելի որդեկի մը գերեզմանին վրայ դրեր, դարձան ի թարմ, և 'ի բազմագունեան ոսկեծաղիկս։

Ու երբ անմխիթար մայրը դլուխը վերցուց, տեսաւ բազմաթիւ գեղաբոյս ծաղկունք՝ որ պսակ կը բոլորէին որդւոյն գերեզմանին վրայ դրուած խաչին չորս կողմը, ու կապերտի նման կը ծածկէին ամենոր պզտի փոսը։

Իրական ծաղկունք էին, առոյգ ու թարմ ոսկեծաղիկք, որ իրենց դուն հոտով կը յ'շեցընեն թէ ցաւոց և մահուան նուիրուած են։

Զգիտցուիր թէ ով գործեց այդ հրաշքը. արդեաք Գիսակին մամուն ստուերը, բարերար հոգի մը, եթէ կոյսն սուրբ ցաւագին՝ որոյ այնքան պաշտօնասէր էր խեղճ մայրը։

Պարզ ու դիւրին հրաշք մը չէր ի գերեզմանատանն այն օրը կատարուածը. վասն զի սպիտակ, դեղին ու կարմրագոյն ոսկեծաղկանդ մէջ տեսաւ միշտ խաչին վրայէն կախուած այն աղքատին փունջը՝ զոր ապակեայ զանգակին տակէն վերուցեր էր։

Այն օրուընէն ի վեր՝ ամէն տարի, պզտի փոսին վրայ, պզտի խաչին վրայ կը ծաղկի ոսկեծաղկի բոյս մը, և խեղճ մայր մը կ'արտասուէ և կը յուսայ։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ՆՈՐ-ԵՈՐՔԻ ՎԻՃԱԿՆ

Որովհետեւ այսչափ տարիներէ ի վեր միշտ անդադար գաղթականութիւնք կ'ելլան Ամերիկա Եւրոպայի այլ և այլ տերութիւններէ, մանաւանդ Իտալիոյ և Իրլանտայէ, որոց առաջինն կարօտութեան պատճառաւ և երկրորդն Անգղիացւոց կրած նեղութիւններէն. և նոյն իսկ ազգային գաղթականութիւն մ'եղած այս հեռաւոր աշխարհս, կ'արժէ հոս փոքրիկ տեղեկութիւն մը տալ Ամերիկացւոց գաղթականս ընդունելու կերպին և Նոր-Եօրք քաղքին վրայ, ուր ընդհանրապէս կ'իջնեն գաղթականք։

Երբ շոգենաւ մը հասնի Անգղիայէ կամ Իրլանտայէ ի Քասթլը-Կարտըն հանդերձ գաղթականաց, արդէն մասնաւոր կանոնք հրատարակեալ են այս նկատմամբ, նաւակներ կան որ զգաղթականս կը բերեն, և ապա կը մտցրնեն զամենն մեծ բոլորաձև շէնքի մը մէջ որ առեռնաց թատրոն էր։ Յետոյ կարգաւ կը կենան պաշտօնէից առջև որոնք իւրաքանչիւրին անունն, հայրենիքն, որոշեալ տեղն գրի կ'անցրնեն։ Երեւակայեցէք թէ ինչպիսի բարեկարգութիւն պէտք է այնչափ հազարաւոր անձանց վրայ այս գործն կատարելու համար անչիոթ, որոնք շատ շոգենաւերով մէկտեղ կը հասնին երկու օրն մի անգամ, գիշեր կամ ցորեկ անորոշ ժամու։ Մինչդեռ այսպէս կարգաւ շարուած են և անուններն կը գրուին որոց մերձաւորքն կամ ծանօթքն հոն մերձ սրահի մը մէջ են՝ անցնելու ժամանակին դուրս ելլելու համար անունին կը լսեն որուն պէտք է անդէն պատասխանել։ Եթէ գաղթական մը գիտէ իւր նպատակն՝ փութով երկաթուղեաւ կը դրկեն իրեն աղխիւքն հանդերձ։ Իսկ եթէ չեն գիտեր թէ ուր պէտք է երթան և չունին ծանօթ անձինք, այն ատեն մասնաւոր կանոնք կան առ այս որ յիրաւի կարեւորք են։ Եթէ ծանօթ ունենան հեռաւոր տեղեր, հեռագիր կը զարնուի իմաց տալու. ապա թ', ոչ պէտ։ է այն տեղոյն մէջ մնալ առանց թափառելու քաղքին մէջ գործ մը, տեղ մը գտնելու պատրուակաւ. այս վերջին կանոնս մասնաւորապէս կանանց և աղջկանց համար է, որոց և ազգարարութիւն կ'ընեն առանձինն նաւահանգստին մէջ, ամենեին առաջարկեալ գոյշանց ինչ յանձնառու չելլալ։

Այդ որչափ մեծ է կարգաւորութիւնն զգաղթականս ընդունելու համար, այնչափ առանձնական անձի մը որ կը գայիէ, շատ դժուարութիւններ ընդ առաջ կ'ելլեն։ Նոր-Եորք յիրաւի Բաբելոն մ'է,

ամենայն անձն որ մոնէ միանգամ՝ կը կորսուի իբր կաթիլ մը յանգունդս։ Հինգ քաղաքէ կը կազմուի Նոր–Եորք, ճշմարտիւ խօսելով, և երկու ու կէս միլիոնէ աւելի բնակիչ ունի։ Ընթիւ են ժամանակաւոր և հոգեւոր ինքնին և նաւաբեկութիւնք քաղքին մէջ։ Թէպէտ հսկողութիւնն լաւ է, և ըստ չափու. և լաւ բաշխուած է ոստիկանութիւնն. ճամբաներն դեղեցիկ են և կարգաւորեալ, ախտից և ապականութեանց տեղերն օր ըստ օրէ կը նուազին և կ'աներևութանան. բայց ժողովրդեան գունդագունդ բազմութիւնն այնչափ մեծ է և տարօրինակ՝ որ ճամբաներն անբացատրելի շառաչմամբ լի է վաճառողաց և տուրեւառի երթևեկութեամբ։ Ֆիֆթ Ավենիւ (Fifth Avenue) ճամբան և ուրիշ մեծ և բազմագնաց ճամբաներ շատ անգամ ժամերով անանցանելի են հարուստներու ծառայից անդիմադրելի հեղեղին պատճառաւ։ Ճամբաներն կրանիտէ յատակեալ են, որպէս զի կարենան ընդդիմանալ և տեւել անընդհատ հարուածոց, սալասմբակ ձիոց անդադար ընթացից, անուոց չփմանն, և ամբոխին գնացից. մինչդեռ երկաթուղւոյն ամենաբարձր կամրջոց վրայ տասն գլխաւոր ծառազարդ ճամբաներուն չորսին մէջ, մարդկանց գլխոց վրայէն կը թռչին կառախումբք երկաթուղւոյն, որոնք օրն կէս միլիոնէն աւելի ճամբորդ կը տանին. և ի ստորև չոգւով տրամուղեաց երթ և դարձն կողմնական ճամբաներու մէջ յամենայն կողմանց, այնպիսի ժխոր և աղմուկ կը պատճառէ որ ականջ կը խլացրնէ, մինչդեռ մարդս մը տօք կը զարմանայ այսպիսի անանման շարժման վրայ։ Քաղաքական ոստիկանն որ ամենայն քառուղեաց կեդրոն կեցած է, ուր չորս կողմէն կը հասնին բազմութեամբ կառք, հանրակառք, երկանիւք և սայլք, բաւական է որ ձեռնոցափակ մատը վերցնէ և բովանդակ բազմութիւնն մէկէն կը կենայ, ճամբայ թողու արանց և կանանց և մանկանց բազմութեան։ Եւ երբ կը խոնարհեցնէ մատն, դարձեալ ի միասին կը իսառնուին ճանապարհաց գիծերն։

Այսպիսի աշխարհի մէջ մոնող անօգնական գաղթական աղջկան կամ կնոջ համար քահանայի մը դիւցազնական ողորմութիւնն և անխոնջ հսկողութիւնն պէտք է խնամ տանելու համար։

Այս նորօրինակ կենդանութեան համեմատ ալ է տեղւոյն հարբութիւնն և աղքատութիւնն։

© National Library of Armenia

ՎԼԱՍԻԿԱՌՆԻԱՑԻ

ՎԵՆԵՏԿԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ ԺԶ ԴԱՐՈՒՆ

(Տես յէէ 345)

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Անյաջող խորագիտութիւն

Վենետկոյ հասարակապետութեան պաշտօնեայք, ճշմարիտ և կամ կարծեօք եղեռնաւոր համարուածներուն վրայ ամէն տեսակ փորձ 'ի գործ դընելէ վերջը, որովհետև կը ջանային ոգնա բերընէն իրենց վրայօք եղած ամբաստանութեան խստովանութիւնը կորզել, կը դիմէին ճարտար և շատ անգամ յաջող խորագէտ հնարից. և երբ այս վերջիններս 'ի զուր ելլէին, այն ժամանակ ամբաստանեալն տանջանաց բարբարոս փորձին կ'ենթարկէին։

Այս վատահամբաւ պատիժս, զոր հնարեր են յայտնապէս բռնաւորք, և զոր 'ի գործ դրեր են ԼԹէ աշխարհական և ԼԹէ եկեղեցական դատաստանարանք, մինչև անցեալ դարուն վերջերը, (յոմանց նաև մինչև ներկայ դարուս սկիզբները), կը ցուցընէ յայտնի կերպով թէ ինչպէս այն դարերն անգութ և չարասիրտ էին, և թէ ինչպէս մարդկային ազգի բարոյականութիւնն դեռ շատ հեռի էր ազդելու դատաւորաց սրտին մէջ այն մարդասէր զգացմունքը, որ յետոյ՝ տարեաց շրջաններ վրայ անցնելով, հասաւ մինչև այն աստիճանին՝ որ ոչ միայն ընջեց այս բարբարոս փորձերը, այլ նոյն իսկ նաև մահուան պատի'ը. խորհրդածելով որ նոյնն թէ՛ մարդկային և թէ միանգամայն աստուածային օրինաց դէմ էր. որովհետև մարդս չունի իշխանութիւն բանալու ինչ որ չէ կարող ընդունիլ.... Բայց մենք առանձնք մեր պատմութեան։

Ուստի, նախ քան մատնելու զՎիկտորինէ տանջանաց պատժոյն, ուզեց Քառասնից Ատենապետն 'ի փորձ դնել իւր սովորական խորագիտութիւններէն մէկը։

Այս պատճառաւ ուրեմն, առաւօտ մը, չարասիրտն ճէլԲրուտ, կեղծաւորութեամբ սեւեր հագուած, բանտապահին ներկայանալով յանձնեց թուղթ մի. զոր երբ կարդաց պահապանն՝ խոնարհաբար ծռեցաւ, և առաջնորդեց ճէլԲրուտի այն առանձնախորշը՝ ուր փակուած էր դժբախտ Վիկտորինէն։ Մութ խղիկին դուռը բանալով վառեց ջահ մը, և բանտին մէջ մտնելով ըսաւ բանտարկելոյն.

— Տիկին, կնիկ մը կը փափաքի քեզի հետ խօսակցիլ։

Այս ըսելով պահապանն՝ թողուց ջահը բանտին մէջ և քաշուեցաւ։

ճէլԲրուտի երևնալն բանտարկելոյն զարմանք ազդեց. և նեղ խղիկին մէջտեղը կանգ առնելով՝ ըսաւ.

© National Library of Armenia

— Դու՞ այս տեղ....

— Այո՛, Վիկտորինէ. իմ մայրենի սէրս մղեց զիս այս խօսակցութիւնս ուզելու, ուստի կրնայ կախուած լինել թէ՛ քու և թէ իմ երջանկութիւնս։

— Խօսէ տիկին. պատասխանեց բանտարկեալն։

— Խօսելիքս կարճ կը կապեմ, ըսաւ ՃԷլԹրուտ, ըստ ամենայնի հաւատարիմ մնալով՝ ինչ որ իրեն պատուիրեր էր Քառասանից գլխաւորն։— Եւ լաւ մը զննելով ամբաստանելոյն դէմքը՝ իրեն խօսքերուն գործած ազդեցութիւնն իմանալու համար, աւելցուց. Քու վրադ դրած եմ բովանդակ յոյս։

— Ի՛մ վրաս, պատասխանեց Վիկտորինէ ապշած, դեռ չհասկընալով այն կատակերգութեան հանգոյցը։— Բայց ինչպէս, ինչ կերպով։

— Ես մայր եմ. և ինչ որ ես քեզի դէմ գործեցի, նոյնը նաև դուն պիտի գործէիր ինծի դէմ, եթէ իմ դիրքիս մէջ լինէիր։ Ուստի եթէ որ և իցէ միջոց 'ի գործ կը դնեմ՝ որդիս գտնելու համար, պէտք չէ որ քեզմէն ատելութեան և կամ մեղադրութեան ենթարկուիմ, ըսաւ ՃԷլԹրուտ։

— Բայց, տիկին....։

— Թող որ խօսիմ, վրայ բերաւ ՃԷլԹրուտ. իսկ եթէ վրէժխնդրութեան և կամ արծաթասիրութեան ոգւով մղեալ 'ի գործ դրիր այդ եղեռնագործութիւնն....

— Տիկին... գոչեց Վիկտորինէ զայրացած։ Բայց միւսն առանց ուշ դնելու շարունակեց.

— Եթէ մօրեղբօրդ ժառանգութիւնը ձեռք բերելու նպատակաւ, որ գիտէիր թէ որդւոյս մահուընէն վերջը քեզի պիտի մնայ, այն խեղճ տղան սպաննեցիր, հիմա քու ձեռքդ է այդ շարեաց դարման տանիլ, զոր ապահով եմ թէ մտաց այլայլութեան վայրկենի մը մէջ միայն գործեցիր։

— Այդ անարժան կասկածովդ, տիկին, հիմա զիս ամէն բանէ աւելի կը նախատես, պատասխանեց Վիկտորինէ. դան զի այս տեղերուս մէջ ալ եկած ես թշնամանելու զիշուառութիւնն, ուր պէտք էր յարգել զէթ եղկելոյ մը ցաւը, որ բռնադատեալ է կրելու անիրաւ պատիժ մը, որոյ միակ պատճառն է անզգամ զրպարտութիւնդ։

— Դուն ալ մայր ես, Վիկտորինէ. և եթէ զային քեզի իմացընէին որ որդիդ յափշտակուած և կամ սպանուած է, ինչ պիտի ընէիր, հարցուց ՃԷլԹրուտ։

— Ե՛ս. ես ցաւէս կը յիմարէի, ըսաւ Վիկտորինէ։

— Եւ միթէ ամէն միջոց 'ի գործ պիտի չդնէիր զինքը վերահաս մահուընէ ազատելու համար. եթէ դիպուածով ողջ լինէր, հարցուց ՃԷլԹրուտ։

— Ո՛հ, յայտնի է թէ այո։

— Ուստի դուն՝ զբեզ հիմա իմ տեղս դիր. և մտածէ որ ես մայր եմ, և քեզի դէմ 'ի գործ դրած իրաւցընէ խիստ, բայց պարագայէն պահանջուած այսպիսի վարմունքս հանդերձ, իմ սիրտս ոչ թէ ատելութիւն կը սնուցանէ քեզի դէմ, այլ ընդհակառակն ներողամտութիւն։ Ըսէ ուրեմն, ինչ ըրիր իմ որդիս, ուր է հիմա ինքն. և ես կը խոստանամ իմ պաշտպանութիւնս, քեզի դէմ սկսուած դատաստանը խափանելու համար։ Քու խոստովանութիւնդ ուրեմն կարող է միայն՝ շնորհել ինձ այն երջանկութիւնն՝ զոր ինձմէ յափշտակեցիր, և քեզի՝ այն ազատութիւնն զոր կորսընցուցիր։

— Քիչ մ'առաջ ըսիր, տիկին, որ քեզ նման՝ ես ալ մայր եմ, հետևաբար չեմ կրնար հասկընալ թէ ինչպէս կրնաս ենթագրել, նոյն իսկ վայրկեան մի միայն, թէ ես այդպիսի սիգալի եղեռնագործութիւն մի կատարած լինիմ։ Ոչ. տիկին. մի կասկածիր. այդպիսի կասկած՝ նոյն իսկ քու-

թեան դէմ նախատինք մ'է. վասն զի լաւ գիտնալով թէ որպիսի մեծ է մեր մը՝ իւր արդանդին պտղոյն վրայ ունեցած սէրն, նոյն իսկ բնութիւնն ինքն. իրեն հակառակ պիտի կանգնէր, եթէ ուզած լինէի չաղախել ձեռքերս այն անմեղին արեամբ։ Ոչ, տիկին, զայդ մի պնդեր. մայր մը՝ չի կրնար և ոչ իսկ կասկածել, որ ուրիշ մայր մը՝ այդպիսի սպանութիւն կարող եղած լինի կատարել։

Այն դժբախտն այնքան անկեղծ էր, որ չէր անդրադառնար իւր դէմ հը. նարուած դաւն. բայց իւր խիղճն այնքան մաքուր էր, որ առանց իւր ուզե. լուն, բերանը կը դնէր իւր դատին պարզ ճշմարտութեան պաշտպանու. թիւնն։

— Իրաւ է, պատասխանեց Ճէլթրուտ կեղծաւորութեամբ, չեմ կրնար ժխտել որ ըսածներդ անուրանալի ճշմարտութիւնք են։ Հաւատա որ ամ. բողջ ունեցածս կը բաշխէի անոր՝ որ իմ որդիս ինծի դարձրնէր։

— Հարկ չկայ որ զայդ ըսես, պատասխանեց Վիկտորինէ, ամէն մարդ համոզուած է ըսածիդ։

— Եւ եթէ այդ ալ բաւական չլիներ, շարունակեց Ճէլթրուտ, աւելի ևս առջի ըսածն հաստատելով, ան որ ալ լինէր յանցաւորն՝ առանց պատժի պիտի մնար. վասն զի եթէ ապատ է և ոչ իսկ անունը պիտի տամ. իսկ եթէ արդարութեան ձեռքն ընկած լինի՝ իւր դէմ եղած վրէժխնդրութեան վճիռը ջնջել պիտի տամ։

Այս կերպով խօսակցութիւնը վերջացընելն՝ իրաւացընէ խորամանկու. թեան քաջարուեստ հնարք մ'էր։ Բայց Վիկտորինէ, որոյ խիղճն բնաւ խայթ չունէր, պարզօրէն պատասխանեց։

— կը փափարիմ, տիկին, որ սրտիդ իղձերը կատարուին. դէթ այսու ևս ալ բանտիս մէջ կրած թշուառութեանցս վերջը կը գտնէի, ուր առողջու. թիւնս կարգէ դուրս կը վնասուի, և ամէն մէկ օրը որ կ'անցնի՝ իմ պատուոյս վրայ մէկ մէկ բիծ կ'աւելցնայ։

— Բայց մինչև որ յանցաւորն չյայտնուի, դժբախտաբար պիտի չարչըր. կուիս դու այս ահաւոր բնակարանիս մէջ, պատասխանեց Ճէլթրուտ։

— Մեծապէս վատահ եմ որ անմեղութիւնս պիտի հրատարակուի դատա. ւորներէս, որով և բիչ առնէն ազատութիւնս պիտի ձեռք ձգեմ։

— կը խաբուիս, ըսաւ Ճէլթրուտ դաւն ատելութեամբ, տեսնելով որ իւր յոյսն՝ դերև ելած էր և իւր փափաքած խոստովանութիւնը երազած իր մը դարձաւ։

— Ինչո՞ւ համար, հարցուց Վիկտորինէ։

— Վասն զի արտաքին փաստերը քեզի դէմ են։

— Բայց նաև շատ անգամ սխալ կրնան լինել. և իրաց ճշմարտութիւնն զանոնք սուտ պիտի հանէ. և իմ անմեղութիւնս ամենուն առջև պայծառ պիտի ծագի լուսաւոր արեգակն պէս։

— Այո՛. բայց գիտես թէ ինչ միջոցներով պիտի ծագի այդ փափաքած լոյ. սը դ, ըսաւ Ճէլթրուտ ատելութեամբ։

— Աստուծոյ օգնութեամբ և դատաւորներուս իմաստութեամբ, պատաս. խանեց անկիղծարար բանտարգեալն։

— Ոչ մէկով և ոչ մի սով, վրայ բերաւ Ճէլթրուտ, այլ միայն տանջան. քով, որ միակ հնարք է յանցաւորաց բերնէն դուրս հանելու այն եղերանց խոստովանութիւնը, զորս ծածկել կը ջանան կեղծեօք, իբրև զոհ մը, իբրև անմեղ մը բողոքելով։

— Տանջանքո՞վ, հարցուց Վիկտորինէ զարհուրած։

— Այո՛, աւելցուց Ճէլթրուտ. կը սարսափեցրնէ զքեզ, հա՛։

— Ո՛հ, Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած. տանջա՛նդրս... գոչեց Վիկտորին, երկու ձեռաք երեսը գոցելով և վախէն դող ելած։

— Խոստովանէ ուրեմն, կրկնեց այն ատեն վրէժխնդիր կինն. խոստովանէ յանցանքդ, և չարչարանքն քեզի կը խնայուի։

— Բայց ես խոստովանելու բան չունիմ, տիկին։

— Այն ատեն պիտի մեռնիս. վրայ բերաւ խղդուկ ձայնով Ճէլթրուտ, մեկնիլ ձեւացընելով։

— Բայց, տիկին, Աստուծոյ սիրոյն համար կ'աղաչեմ, ըսաւ բանտարկեալը՝ ձեռքերն իրարու բերելով, դուն միայն կրնաս զիս ազատել։ Կ'աղաչեմ մի՛ թողուր զիս դահճին ձեռքը. չեմ կրնար այն զարհուրելի պատժոյն դիմանալ։

— Այն ատեն խոստովանէ, կրկնեց Ճէլթրուտ, կարծելով որ սարսափեցուց իւր զոհը. այս միջոցը միայն կը մնայ քեզի՝ սարսափելի տանջանքէն ազատելու համար։

— Ուրեմն զիս եղեռնագործ կը համարիս։

— Ոչ միայն ես, այլ նաև բու դատաւորներդ։

— Ո՛վ Աստուած իմ, կրնա՞մ աւելի դժբախտ լինել։

— Խոստովանէ. և ոչ միայն ազատութիւնդ, այլ նաև իմ ունեցած բոլոր հարստութիւնս՝ խոստովանութեանդ վարձք պիտի լինին... հապա....

— Դուրս ելլ, տիկին, ելլ գնա։ Դուն բռնի իմ դատապարտութիւնս կ'ուզես ինձմէ։ Դեռ գոհ չեղար յափշտակելովդ ինծմէ սեփական ժառանգութիւնս, եկան ես հիմա նաև զուարճանալու վայրերի յաղթութեանդ վրայ։ Այո՛, պիտի մեռնիմ ես. բայց այն ահաւոր տանջանաց մէջ ալ՝ պիտի կարենամ գոչել որ անմեղ դատապարտուեցայ, և թէ դուն մահս երազեցիր՝ չարութեամբ ձեռք բերած հարստութիւններդ անխառով վայելելու համար.... Բայց պիտի տեսնես, տիկին, չարունակեց եղկելին՝ ներքին հաստատուն համոզման ձայնով մը, պիտի տեսնես՝ որ քիչ ատենէն ամէն արտաքին երևցած փաստերն սուտ պիտի ելլեն. և ես ձեռք պիտի բերեմ այն ազատութիւնս՝ ուսկից զիս զրկեցիր. և թէ՝ օր մը պիտի կարենամ կրկնակի մարդասպան կոչել զքեզ։

— Տիկին... վրայ բերաւ Ճէլթրուտ աներեսաբար, իբրև վիրաւորուած կին մը. մտածէ՛ ո՞վ ես դուն և ո՞վ եմ ես։ Ո՞վ կրնար որդիս յափշտակել, եթէ ոչ դու միայն, որ մերեղբօրդ ժառանգութեան տէր դառնաս։

— Դուրս ելլիր, տիկին. դեռ աւելի մի՛ զրպարտեր զիս։ Շատ իսկ համբերի՛ցի, ալ չեմ կրնար դիմանալ ներկայութեանդ։

— Ուզածիդ չափ յամառ եղիր, ըսաւ Ճէլթրուտ, լի ատելութեամբ նայուածք մի ձգելով իւր զոհին վրայ. շատ լաւ, կը տեսնենք։ Տանջանքը պիտի կարող լինի հանել բերնէդ այն խոստովանութիւնը զոր չկրցայ։

Այս ըսելով դուրս ելաւ բանտէն, և անմապարեց իմաց տալու Փառասնից Աստենապետին՝ իւր բանտարկեալին հետ ըրած խօսակցութեան անցքը։

© National Library of Armenia

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Խելքը բռնցաՀն

Մինչդեռ ՁելԹրուտ՝ Քառանից Ամենապետին հետ կը զրուցէր, (որ յետ լսելու ինչ որ բանտարկեալն պատասխաններ էր, հրաման հանած էր զՎիկտորինէ տանջանաց փորձին ենԹարկելու), ամբաստանելոյն խղճին մէջ կը մոնէր Գէորգ, որ քիչ յառաջ անօրինութեան առեր էր տեսակցելու իւր կնոջ հետ՝ բանտապահին հսկողութեան ներքև։

Յետ առաջին սիրոյ ցոյցերու, այն երկու թշուառներն սկսան խօսիլ՝ ամէն բանէն աւելի իրենց հաճելի նիւթոյն վրայ. և ինչպէս ամէն ոք կրնայ դուշակել, Վիկտորինէ տեղեկութիւններ ուզեց իւր ամուսնէն իրենց տղուն վրայօք, համարելով եղկելի մայրն որ իւր այրն զինքը Դարմանոցէն առած լինի։

Այսպիսի հարցման մը վրայ Գէորգ չէր գիտեր ինչ պատասխանէ. բայց միւս կողմէն ալ ուզելով իրին ատուգութիւնն իմանալ, ըսաւ.

— Ահաւասիկ, Վիկտորինէ. ուզեցի տեսնել զքեզ ոչ միայն քու առողջութեանդ, քու գատաստանիդ ինչ կերպ առաջ տարուելուն վրայ տեղեկանալու համար, այլ նաև մեր սիրուն որդւոյն վրայօք խօսելու համար։

— Այո՛ն, Գէորգ. խօսէ ուրեմն մեր որդւոյն վրայ, կանչեց լի ուրախութեամբ խեղճ կնիկն։ Ա՜խ, գիտնայիր թէ որչափ կը ցաւիմ զինքը տեսնել չկարենալուս համար։ Գիտցիր, սիրուն Գէորգս, գիտցիր որ այս բանտը դառն կու գայ ինծի՝ մանաւանդ քեզի և որդւոյս համար... Ըսէ ուրեմն առողջ է մեր տղան. գեղեցիկ է. ինչո՞ւ համար զինքն ալ հետդ չբերիր. ախ, թէ կարենայի տեսնել զինքը...

— Լսէ, Վիկտորինէ, պատասխանեց Գէորգ, զուր տեղ ջանալով ձայնին այլայլութիւնը պարտկել. ձախորդ լուր մը լսելու քաջութիւն ունիս։

Վիկտորինէի գոյնը նետեց, և ձեռքերը գլխուն մազերուն մէջ խօթելով, հարցուց.

— Ի՞նչ, մեռա՞։

— Ոչ, պատասխանեց Գէորգ։

— Լաւ ուրեմն, ըսէ, խօսէ. ինչ եղած է որդւոյս։

— Վիկտորինէ, սիրտս առաջ չերթար ըսելու։

— Հիւանդ է արդեօք։

— Եւ ոչ։

— Ուրեմն ինչո՞ւ համար կը վշտանաս։

— Ահաւասիկ, պատասխանեց Էրիկն, գժուարութեամբ հնչելով բառերը. Տղան Դարմանոցը չէ։

— Է՛հ, ըսաւ Վիկտորինէ բոլորովին ապուշ դարձած, խաբուած ես։

— Երանի՜ թէ խաբուած լինէի։

— Նշանները կեցեր են։

— Չկան այդպիսի նշաններ Դարմանոցին վարչութեան քով։

— Բայց Գենովափէ դայեակն՝ որ զինքը Դարմանոց տարաւ...

— Մեռած է։

— Մեռած է... ա՜խ, սիրելի Գէորգս... խելքս գլխէս կ'երթայ, պատաս-

© National Library of Armenia

խանեց ցնորելով խիղճ մայրն. որոյ աչքերն հրեղէն փայլակներ կ'արձակէին, և զարհուրած կը տնկուէին երկան վրայ, որ հարցուց իրեն.

— Մինա՞կ էիր՝ երբ տղան դայլակին յանձնեցիր,

— Մինակ, պատասխանեց մեքենայաբար կինն։

— Դեկտեմբեր 20ին, երեկոյեան ժամը ինչին էր։

— Այո՛...

— Ասոնք էին այն նշանները, զորս դրիր տղուն կապերուն վրայ, հարցուց Գէորգ ցուցընելով զանոնք կնկանը, որ ապուշ նայուածքով վայրկեան մը դիտեց զանոնք և ըսաւ. Ասոնք էին։

— Լաւ ուրեմն, ըսաւ Գէորգ, (առանց ուշ դնելու որ կնոջը դէմքին վրայ յանկարծական փոփոխմունք կատարուեր էին), մեր որդին առանց ամենեւին տարակոսի կորուած է։

— Կորուա՞ծ, սրտաճմլիկ ձայն մ'արձակեց մայրն։ Իսկ դուն ամենեւին ցաւ չես զգար, իսկ դուն ամենեւին հոգ չես ըներ...

— Ո՛չ, յիրաւի կը ցաւիմ, պատասխանեց Գէորգ, այս անգամ զննելով կնոջ դէմքը, տեսնելով զայն գունաթափ և աչքերը կարծես իրենց խորչէն դուրս ցատքելով։

— Չէ, չէ, կարելի բան չէ, ըսաւ Վիկտորինէ. սուտ ըսիր... դու բնաւ սէր չես զգար...

— Ի՞նչպէս, ինչ կ'ըսես, պատասխանեց Գէորգ ինքնիրմէն դուրս ելած և կնոջը մօտենալով։

— Բայց ինչու՞ չեր երթար զինքը առնելու, ըսաւ իրեն կինն՝ սիրալիր յանդիմանական ձայնով. տղայ մի զոր դեռ չես տեսած... որ քու որդիդ է... Զարասի՛րտ... գնա՛ շուտով. հոս բեր զինքը... կ'ուզեմ զինքը տեսնել. կը հաճի՞նա...

— Ցէ՛ր Աստուած... Վիկտորինէ... քու խօսելու կերպդ...

— Մանաւանդ թէ ոչ... կնցիր, ես երթամ փարմանոց մեր որդին առնելու... տեսնես որ ինծի պիտի տան։ — Այս խօսքերս ըսելով՝ երթալ կ'ուզէր, բայց ոտքերը զինքը չէին կրնար բռնել. և քանի մը քայլ առնելով ինկաւ ամուսնոյն բազկացը մէջ, որ վազից բռնելու զինքը. և սկսաւ գոչել. Չեմ կրնար... չեմ կարող... ջերմ ունիմ, գլուխս կ'այրի... կուրծքս կը բորբոքի... Ա՛խ, որդիս... որդի՛ս... Հառաչեց, և ընկաւ խշտեկին վրայ, ընդհատ ընդհատ կորսուած տղան կանչելով։

Եղկելին խելքը թռուցեր էր։

Այն վայրկենին բանտին դրան առջև ներկայացաւ Աստեղին խորհրդականներէն մին, ձեռքը բացուած թուղթ մի կրելով և հետը քանի մը զինուորք, որք այն տեսարանին հանդիպելով կանգ առին և խորհրդականն հարցուց Գէորգի եղած չեղածը։

Խեղճ ամուսինն, ընկճեալ ցաւերէ. պատմեց պաշտօնէին մանրամասն ոճով՝ ահաւոր դէպքը։ Ուստի չուտ մը բժիշկ կանչել տուին և Գէորգը բանտէն դուրս հանելով՝ եղածը Քառասանից Ատենապետին ականջն հասուցին։

Հանդիպածն իմանալով՝ պաշտօնեայն քանի մը տող գրեց խորհրդականին ձեռքն եղած թղթոյն վրայ և հրամայեց որ բանտարկեալը բանտին հիւանդանոցը տանին, ուր հոգ տարուի իրեն՝ պարագային պահանջածին համեմատ։

Խորհրդականին բերած հրամանն էր զՎիկտորինէ տանջանաց փորձին ենթարկելու պատուէրն։

© National Library of Armenia



ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՑ ԲՆԱԿԵԼԻՈՒԹԵԱՆ ՄՈԼՈՐԱԿԱՑ

(տես յ'էջ 364)

ՐՊԼՈ զի գաղափար մ'առնունք մոլորակաց մեծութեան ենթադրենք երկրիս մեծութիւնը 1, միւս մոլորակաց կը լինի յաջորդ թիւեր.

Փայլածուին	0,1	Լուսընթացին	1470,2
Արուսեկին	0,9	Երեւակին	887,3
Երկրիս	1,0	Ուրանոսին	80,0
Հրատին	0,2	Պիսիդոնին	84,0

Բայց դեռ աւելի պարզ բացատրելու համար, համարինք արեւու մեծութիւնն այնպիսի գունդ մի որ ունենայ 2 ոտք կամ 0,61 հարիւրորդամէտր տրամագիծ, և այս գունդս ներկայացնէ դդում, այն ժամանակ

Կորեակ կը	ներկայացնէ	զմեծութիւն	Փայլածուի
Փոքր ոլոռն	»	»	Արուսեկի
Միջակ ոլոռն	»	»	Երկրիս
Գնդասեղ	»	»	Հրատին
Նարինջ	»	»	Լուսընթացին
Միջակ խնձոր	»	»	Երեւակին
Պարզ կեռաս	»	»	Ուրանոսին
Մեծակակ կեռաս	»	»	Պիսիդոնի

Վերահասու լինելով այս կերպով հեռաւորութեան և մեծութեան արեւու և մոլորակաց, կը յաւելում որ ըստ Կոպեռնիկեան դրութեան, երկիրս իւր տարեկան շրջանը արեւու շուրջ կը կատարէ մանր-

© National Library of Armenia

երկրորդի մէջ 28 վերստ կամ 30 քիլոմէդր. իսկ արևն՝ որ ինքնիշխան տէր է երկրիս և մոլորակաց, աստիճանաբար կը թաւալի տիեզերաց մէջ, ունենալով կեդրոն ձգողութեան Ալգիոն աստղը. անշուշտ Ալգիոն ևս անսահման տիեզերի մէջ կը թաւալի մի ահաւոր շրջանով, այլ աստեղ շուրջանակի, որ մեզ անծանօթ է։

Ի վերոյ ասացելոցս դուցէ մարդս կը համոզուի՝ թէ մեր երկիրը՝ բովանդակ արարչութեան մէջ, ամենափոքր նշանակութիւն ունեցող մոլորակ մի է, ուստի եթէ բոլորովին յոչինչ դառնայ ևս, հապիւ հազ զգալի պիտի լինի բոլոր լուսաւոր մարմնոց դրութեան մէջ։

Ուրեմն երբոր մարդս ճանչցաւ իւր սխալմունքը, երբոր տեսաւ կոպեռնիկեան դրութեան մէջ թէ արևու շուրջ կը թաւալին նաև այլ մոլորակք, որք մի և նոյն իրաւամբ կարող էին լինել կեդրոն տիեզերիս, նման մեր երկրիս. միով բանիւ, երբոր յայտնի եղաւ որ այս դրութիւնս չէ միակ յանսահման միջոցի, իսկոյն խնդիր եղաւ թէ արդեօք միայն երկրիս բնակիչք կը վայելեն տիեզերաց այս հրաշալի ներդաշնակութիւնը, միթէ չկան յայլ մոլորակս կեանք և կենդանիք, և նոյն իսկ բանականք, որք բանեցընէին իրենց բոլոր հոգեկան ոյժեր առ ի հաստատել անսահմանին և լուծել առաջիկայ հարցս՝ թէ կան բնակիչք և յայլ մոլորակս թէ ոչ։

Աստուծոյ ամենակարողութեան առաջ չկան անհնարինք. ուստի դժուարին է հաւատալ թէ Աստուծոյ արարչական կամքն և զօրութիւնն՝ սահմանափակուէր միայն յայնմ՝ զոր կը տեսնեմք երկրիս վրայ. ուր մնաց որ երկիրս ամենափոքր է և չնչին առ ի բովանդակել ամէն հնարաւոր կենդանիս։ Այսու համոզմամբ և հիմնուելով գիտութեան արդեանց վրայ, նախնիք մեր ոչ միայն ընդունեցան թէ կայ կեանք ի մոլորակս, այլ մինչև անգամ մտածեցին կանոնաւոր և անփոփոխ կապակցութիւն մի հաստատել այն բնակչաց հետ, որք հեռու են մեզմէ աշխարհներով. ի հաստատութիւն որոյ ահաւասիկ քանի մի դէպք։

ԲԱմերիկա գտնուած է երկնաքար մի, որոյ վրայ ագուցեալ էր մետաղեայ թիթեղ մի, զոր հանելով վրայէն, երկնաքարին վրայ փոքրագրուած տեսնուեր են բոլորակներ, որոց դիրք ճիշդ կը համապատասխանէին մեր արևային դրութեան, եթէ նայելու լինէինք Հրատէն։ Իրողութիւն համարելով զայս, նախնիք մեր իրենց երևակայութեամբ հաստատուն կերպով ենթադրեցին թէ Հրատին մէջ կան աստեղաբաշխք։

Հռչակաւոր Հ. Քիրխեր քահանայն այնպէս համոզուած էր թէ կայ կեանք ի մոլորակս, որ իւր Աստեղաբաշխական հմտոյից գրոց մէջ բազմաթիւ առաջարկութիւններ կ'ընէ այս տեսակետով։

Առաջարկուեցաւ նաև հեռագրական հաղորդակցութիւն մի հաստատել Հրատին հետ ի ձեռն երկրաչափական ձևոց գոյնզգոյն նշան-

ներով, հետևեալ պատճառանութեամբ. Եթէ կան մարդիկ 'ի Հրատ, անտարակոյս նոցա մէջ կը լինին և թուաբանագէտք. եթէ կան թուաբանագէտք, ուրեմն ծանօթ պիտի լինի նոցա Պիթագորեան հայեցողութիւնն, հետևաբար կ'արժէ որ երկրիս վրայ ամէն կողմն չինուին մեծամեծ ուղղանկիւններ, որով և հարցնել նոցա թէ ինչ բանի հաւասար է ուղղաձիգներու քառակուսեաց գումարը. իսկ նոցա կը մնայ հարցընել մեզի հակուղիղներու քառակուսեաց գումարը։

Եղան մինչև մտածողք իսկ գրութիւն մի հաստատելու ընդ բնակիչս մոլորակաց, զուգորդական հայելեաց մէջ ամփոփուած խուրձ խուրձ լուսոյ ճառագայթներ ուղարկելով, ըստ այնմ կարծեաց թէ՝ լուսոյ ճառագայթք պիտի տեսնուին յԱրուսեակ, 'ի Հրատ և 'ի Պիսիդոն իսկ։ Ոմանք համարեցան նաև թէ լուսաւոր կէտեր, որք արդէն մերձաւոր մոլորակաց վրայ փորձուեր էին, կրնան լինել իբրև նշաններ, երկրիս վրայ ծառայելու համար փոխանակ թղթակցութեան։

Սոցա նման ենթադրութիւնք և կարծիք շատ են, զորս պէտք է համարել մարդկային երևակայութեան դիւք և ոչ եթէ ուսումնական ճշմարտութիւնք։

Սակայն ինչ էր պատճառ և երբ աւելի յաստարէզ ելան այսպիսի երևակայութեան արդիւնք։— Անմիջապէս երբ հեռադիտակ գտնուեցաւ 1642 ին, յորում մարդկութիւն հետախոյզ հետաքրքրութեամբ և անհամբերաբար սկսաւ 'ի խորս թափանցել առ հասարակ երկնային միջոցին, և ամենէն աւելի մեզի մերձաւորագոյն լուսաւորին՝ Լուսնի։

Գալիլէոսի առաջին փորձառութիւնք, Ամերիկայի գիւտին չափ մեծ ազդակ հանեցին։ Հաղիւ թէ առաջին գժուարին քայլն եղած էր, իսկոյն անհամբերաբար ուզեցին երկրորդ, երրորդ՝ և այլն քայլեր ընել. բայց որովհետև գիտութեանց արդիւնք չի յայ՝ողեցան ըստ փափաքանաց, և թէ 'ի զուր սպասելով շատ տարիներ անցան, և մարդիկ տակաւին չի կարողացան տեսնել լուսնային քաղաքներ և նոցա բնակիչներ, այն ժամանակ իրենց բորբոքեալ երևակայութիւնն յառաջ գնաց, այլ ևս չսպասելով ուսումնական եզրակացութեանց, սանձ 'ի բերան ալեցաւ 'ի միջոց տիեզերիս։ Որոյ արդիւնք եղան անթիւ երևակայական նկարագրութիւնք ճանապարհորդութեանց լուսնոյ և մոլորակաց, յորս շատ վաղվաղուն են ստորագրութիւնք մոլորակային բնակչաց, զոր օրինակ « Փայլածուի լերինք զարդարուած են ամենագեղեցիկ պարտէզներով, ուր կ'ածին ոչ միայն պարարտ և ջրաւէտ պտուղներ 'ի կերակուր փայլածուի բնակչաց, այլ և զանազան կերակրեղէնք։ Երբոր այն տեղի բնակիչք կ'ուզեն ճաշել, բաւական է միայն սեղան դնել, և իսկոյն կ'երևին թռչունք ծառայողք, որք մատագրութեամբ ընելով հրամաններ, կը թռչին 'ի լերինս և պէտք

© National Library of Armenia

եղած ուտելիք և կերակրեղէն առած կը բերեն նոցա ամենայն դիւրութեամբ »։

Ա. Հասարակ յերևակայական նկարագրութիւնա՝ այնչափ յառաջ գնացին, մինչև իսկ ուղեցին չափել մարդկանց հասակը. զոր օրինակ, ենթադրելով թէ մարդկանց հասակը համեմատական է մոլորակաց զանգուածոց, կը հետևցնէին թէ մարդիկ ի լուսին 1 ոտք կամ 0.8 տասնորդամէջը բարձրութիւն պիտի ունենան. իսկ արևու քնակչաց հասակը 200 ոտք կամ 60 մէջը պիտի լինէր, և այլն։

Մեծահռչակ Ֆէֆիլէր ևս, քանի որ դեռ չէր գտած իւր անմահ օրէնքները, երկայն ժամանակ նոյնպիսի երևակայական ենթադրութեամբք զբաղեցաւ. սակայն մարդկային այս երևակայութիւնք կրնան համարուիլ իբրև սանդղամատուռնք, որոց վրայ կարելի է ժամանակաւ ելնէ մարդկային հանճար, զոր նախախնամութիւն որոշեր է զայս խնդիր հաստատուն օրինաք լուծելու։ իսկ այն ամենայն մանրամասնաք, զորս ընտրեցինք 'ի նմանօրինակ վիպաց, իբրև պարզողք առաջիկայ խնդրոյս, կարելի է դնել մի մեծ շրջանակի մէջ, որպէս պատկեր մարդկային երևակայութեանց, որոյ անեզր սահմանէն դուրս չելլ ելլ ծագել։

Ուրդ այս խնդիրս պէտք է լուծել ոչ ըստ մի միայն տեսութեան, այլ ըստ ամենայն մասանց. օրինակի համար. Պէտք է հետազօտել, ի մոլորակս զկենանս և զկենդանիս ըստ մեր երկրիս տեսութեան, համարելով թէ մի և նոյն է և նոցա տարբերական գոյութիւնն, նոցա քառակուսի հիւսուածոց կազմութիւնն, նոցա ռճողութեան օրէնքն, ենթակայ լինել ՇԱՍակար ազդեցութեանց, և այլն։ Երկրորդ՝ պէտք է ընդունել թէ յայլ մոլորակս, ընդ այլ պայմանաք՝ ջերմութեան, լուսոյ, եղանակի տարբոյ, տարբոյ երկայնութեան, ցերեկի և գիշերոյ տարբերութեան, ձգողութեան զօրութեան, և այլն, կարելի է ճաի և զարգանայ կեանք մի բոլորովին տարբեր, մեկի անհասկնալի, և սակայն ունենայ մերիին նման այն ամենայն հասարակ նշաններ, որով կը տարբերին կենդանին և զգացողն՝ յանգործարան աշխարհէ։

Թէ այսպիսի ենթադրութիւնք կարելի են, կը հաւաստեն յայնորդ իրողութիւնք։ Ցան և հինգ տարի առաջ ուսումնականք ժխտեցին ամենայն կարելիութիւն կենաց և կենդանեաց 'ի մթութեան և ի խորս ծովու, ապացուցանելով թէ անհնարին է որ կենդանի արարած մի ապրի այնպիսի ճնշման տակ ովկիանոսի խորը։ Սակայն վերջի տարիներուս հետազօտութիւնք ապացուցին թէ անհիմն են բոլորովին այն հեռևութիւնք. վասն զի ի ձեռն կատարելագոյն գործեաց հանեցին 'ի խորոց ծովուն, այնպիսի փափուկ և վիթխարի արարածներ, որոց կեանքն ընդհակառակն անկարելի է առանց այն ահագին ճնշման։ Քանի մը տարի առաջ ևս ձկնորաք ովկիանոսի խո-

րէն այնպիսի ձկունք բռնեցին, որ ծովու երեսը մէկ մինոլորտի ճնշմամբ չի կարողացան ապրիլ· կաշինին ճամբուտեցան, աչքեր դուրս ցրցուեցան ու չարաչար տանջանաք սատկեցան։ Այս ձկունք միայն կրնան ապրիլ ի մեծ խորութիւնս, ուր մեծ ճնշումն կայ և միանգամայն ընդարձակածաւալ ծովային անապատներ, զուրկ 'ի ծովային բուսոց, և որով մեծ կոիւ պիտի ունենան ձկունք իրենց կեանքը պաշտպանելու համար։

Կարծեմ թէ բաւական են յառաջ բերած դէպքերս համոզելու համար թէ կարելի է գործարանաւոր մարմնոց գոյութիւնն յայլ մոլորակս, ոչ միայն ըստ մեր մոլորակին պայմանաց, այլ և ըստ տարբեր պայմանաց, զորս ի վեր անդր յիշեցինք։

Յաջորդ յօդուածով կը տեսնենք աստեղաբաշխութեան և աստեղաբնագիտութեան պատասխանը առաջիկայ խնդրոյս նկատմամբ։

Շարունակելի

Մարաթոնի դիւցազանց գերեզմանն։— Պեռլինի լրագիրներէն մին կ'աւետէ մի հնախօսական հետաքրքրական գիւտ, որ տեղի ունեցել է այս մօտերս Մարաթոնի մօտ։ Մարաթոնեան դաշտին մէջ կայ մի բլուր 9 մէտր բարձրութեամբ, որ հին ժամանակէ ի վեր կը համարուէր Մարաթոնեան պատերազմի մէջ անկեալ 192 Աթենացւոց գերեզմանը։— Սակայն այս գիւտս ըստ բաւականի տարակուսի մէջ կը ձգէր զմարդս, մտածելով որ Շլէյման ոչինչ գտաւ այն բլրան վրայ։— Բայց այս ստոյգ է որ վերջի ժամանակներս Յունաց տէրութիւնն, զանազան յաջող պեղմունք ընելով յԱտտիկէ, կարգը հասաւ նաև Մարաթոնեան բլրան, զոր մեծաւ խնամքով հետազօտելով՝ գտաւ Մարաթոնեան պատերազմի քաջաց գերեզմանը։ Գետինը այն կողմերը բարձրացած է 'ի հին ժամանակէ 3 մէտրի չափ, ուստի բլուրն ի սկզբան ունեցել է գրեթէ 12 մէտր բարձրութիւն, և հիշդ այս խորութեամբ՝ բլրան գագաթէն սկսեալ, և գրեթէ 3 մէտր խորութեամբ արդի գետնի երեսէն, գտնուեցաւ քարէ յատակի նման կարգ մի, որ ծածկուած էր մխրով 2 էն մինչև 8 հարիւրորդամէտր թանձրութեամբ։ Այս մխրոյն մէջ կան դեռ ևս փայտի մնացորդք, սատկի քայքայեալ մարդկային ոսկերք և անթիւ կաւէ միկակ անօթներ։ Այս անօթներս՝ որք ծածկեալ են սև սև գիմաք վազող մարդկանց նկարներով, անտարակոյս կը վերաբերին 490 թուականին նախ քան զՔրիստոս, որով գերեզմանն ևս՝ որ կը բռվանդակէ բազմաթիւ քաջ երիտասարդաց մնխիրներ, կապակցութիւն ունի Մարաթոնեան պատերազմին։ Այս գիւտս մեծ օգուտ ունի ոչ միայն ի հաստատութիւն պատմութեան Մարաթոնեան պատերազմի, այլ և նկարչութեան։

© National Library of Armenia

Զարմանալի լուղորդ մի։— Մօտ ժամանակներս, հռչակաւոր ամերիկացի լուղորդ Դաւիթ Դալտոն լողալով անցաւ Մանչի ջրանքը, Պուլոնէն մինչև Ֆոլքսթէնի, այսինքն 60 մղոն (90 վերստէն աւելի) տեղ կտրելով 23 ժամու և 25 վայրկենի մէջ։ Դալտոն ազատարար մակոյկէն (Ocean King) ինքզինքը ջրոյն մէջ ձգեց Պուլոնի ափունքէն քիչ մը հեռու, և սկսաւ լողալ դէպ 'ի Անգղիոյ ափունքը կոնակի վրայ։ Ազատարար մակոյկն հետը մէկտեղ կ'երթար, և մէջի եղած նաւաստին մերթ ընդ մերթ կու տար լուղորդին զօրանալու համար խոհուէ բարկօղիով (կոնեակով)։ Օդը շատ գեղեցիկ էր, քամի ամենեին չկար և ծովուն երեսը հանդարտ և անշարժ էր։ Հանդերձ այսու Դալտոն մի քանի անգամ հանգիստ առաւ ջրոյն մէջ ոտս վայրկենէն աւելի։ Երկրորդ օրը ժամը 4ին երեկոյեան դէմ մօտեցաւ Ֆոլքսթէնի ափունքը ի մեծ զարմանս և ի մէջ ծափահարութեանց անթիւ բազմութեան, որք ժողվուեր էին ծովափունքը հիացած նորա աննման նիւթական ուժոյն վրայ։ Հետը մէկտեղ եկող ազատարար մակոյկի նաւաստին յայտնեց Ֆոլքսթէնի քաղաքատան որ Դալտոն բոլոր ճամբան կոնրկի վրայ լողաց, բաց 'ի վերջին երկու մղոնէն։ Լողալով մինչև որոշեալ տեղը, Դալտոն բոլորովին ուժաթափ եղաւ և տարուեցաւ նաւամատոյցէն մի մերձաւոր հիւանդանոց, ուր բժշկաց խնամքով իսկոյն անկողին պառկեցուցին, ծածկելով ցրտէն թմրած մարմինը քանի մի վերմակով։ Դալտոն ի զարմանս ամենեցուն շատ շուտ ոչ ժափեցաւ, և այնչափ երկար ժամանակ մնալով հանդերձ պաղ ջրոյն մէջ, ամենեին հիւանդութեան հետք չդգաց։ Դալտոն 38 տարեկան է, ուժով կազմուածքով և վերջին 20 ամաց մէջ ստէպ վարժութիւն կ'ընէր լողալով Ատլանտեան և խաղաղական ովկիանոսաց մէջ, Ամազոնի և Միսիսիբի գետերու մէջ, ինչպէս նաև մնոտատատան Բիսկայեան ծոցին մէջ։ Երեք տարի առաջ միտքը դրած էր կոնրկի վրայ լողալով անցնիլ Մանչի ջրանցքը, և այս նպատակաւ եկաւ ի Ֆոլքսթէնի, ուր երեք ամիս փորձեր ըրաւ միտքը դրածը կատարելու։ Ոչ մի լուղորդ նորա չափ մեծ միջոց լողալով անցեր է։ Մի հնաւանդ բէս անունով, որ կորուեցաւ Նիակարայի հոսանաց մէջ, լողալով անցաւ Մանչի ջրանցքը Դուվրէն մինչև ի Քալէ 21 ժամու և 15 վայրկենի մէջ։

Էլեկտրականութիւն ծառոց հատման համար։— Կալիֆոռնիոյ մեծամեծ անտառաց մէջ ծառոց հատման համար էլեկտրականութիւն կը գործածեն։

Անուշ փայտերուն համար գործիքն է փոքր գչիր մը՝ որ ունի շարժում մը երթի և դարձի, և շարժում մը հոլովման ի ձեռն էլեկտրական փոքր շարժիչ գործոյ։

Գործիքն կը դնեն կառքի մը վրայ, որ կրնայ դառնալ ուղղաձիգ առանցքից վրայ, զոր կը հաստատեն ծառին կոճեղ վրայ։

Գործիքին սուր ծայրն աղեղ մը գծելով կոճեղ վրայ ճեղք մը կ'ընէ։ Յետոյ գործիքը առաջ կը մղեն ճեղքն ի խոր մեծցնելու համար, մինչև որ կոճեղ տրամագիծին հասնի. և նոյն ատեն սեպեր կը դնեն ճեղքից փակումն արգիլելու համար. և կ'անցնին հակառակ կողմն և նոյն գործը կը կատարեն, մինչև որ երկու կողմանց ճեղքն գրեթէ իրարու հանդիպի։

Գործը կը կատարեն ամենայն կարևոր զգուշութեամբ, տապար և աղոց ունենալով ի միասին. և այս ամենայն կը կատարուի խիստ քիչ ձեռաց աշխատութեամբ։

Արծաթահանքի մը զարմանալի գիւտը։— Այս ժամանակներս՝ յորում այսչափ կը խօսուի արծաթի նուազութեան վրայ՝ անշուշտ հետաքրքրական է հետևեալ դէպքը։

Արքէնսէսի Լայթլը Դուքէն արծաթահանքի մը գիւտին լուրը կը լսենք՝ բայց այնպիսի պարագայից մէջ զոր արժան է յիշատակել սատ։ Յիշեալ գաւառին բնակիչ մը ձոն Մաք Ատամ, դրամանենդութեան քրէական յանցանաց համար հինգ տարուան բանտարգելութեան դատապարտուեր էր։ Իրեն դէմ եղած դատաստանին մէջ իմացուեցաւ՝ որ Մաք Ատամի չինած դրամները ամենազուտ արծաթէ էին, և արծաթին քանակը տէրութեան արծաթէն աւելի էր. դատաւորները չէին կրնար իմանալ պատճառը։

Արդ քիչ վերջը յայտնի եղաւ՝ որ յանցաւորը արդէն գտեր էր արծաթահանքը՝ և իր պիտոյից համար կը գործածէր։ Մաք Ատամ թողուց որ զինքը դատապարտեն՝ առանց գաղտնիքը յայտնելու. պատժոյն որոշեալ ժամանակը լմննալէն վերջը՝ տուն դարձաւ, և իւր առաջին գործն եղաւ այցելել արծաթահանքին, և գտաւ զայն ճիշդ ինչպէս որ թողուցեր էր։

Յետոյ տեսնելով որ իրեն չահաւոր չէր այսպէս գործածելը՝ որոշեց յայտնել զայն հարուստ սեղանաւորաց՝ բայց պայմանաւ որ զինքն ալ ընկերակցութեան մէջ գրեն։

Ընկերութիւնը արդէն ձեռացած է, քիչ ատենէն աշխատութիւնք պիտի սկսին. այս արծաթահանքը ցարդ գտնուածներուն մէջ՝ ամենէն հարուստն է։

Կապիկք և հուր։— Պ. Ռոմանէսի թղթակից մը՝ վերջին ատենները Սէնլլինի նոր գրոց վրայ դիտողութիւն մը կ'ընէ, յորում եբրեալի ճանապարհորդը կ'ըսէր, վկայութեամբ Էմին փաշայի՝ որ Մըզանկվայի անտառին շիմպանզէք կապիկներ կը գործածեն իրենց գիշերային արշաւանաց մէջ։

© National Library of Armenia

Սակայն այս առաջին անգամը չէ. ուրիշ բնապատումք և դիտողք ալ այս ծանօթութիւնս ըրեր են, բայց թերևս ցարդ գիտնական աշխարհի անծանօթ մնացեր են։

Պ. Տէլլի Հէքսլէյի հոգեբանական հուշակաւոր գործոյ մը յառաջաբանին մէջ հրոյ վրայ կը խօսի. կ՚պատմէ քանի մը ճանապարհորդաց տեղեկութիւններն՝ որք կը հաստատէին՝ թէ տեսեր են նոր աշխարհին մէջ տեսակ մը կապիկներ՝ որ հրոյ գործածութիւնը գիտեն։ Այս անորոշ և ընդհանուր ծանօթութիւնը կը յիշէնք՝ յուսալով որ այս խնդրոյն մէջ կրնայ մեզի առաջնորդել։

Պ. Վիրի ալ՝ իր բնական պատմութեան կապիկ յօդուածին մէջ կը յիշէ որ «Շատ տեսակը կապկաց իրենց սորվեցուցած ամէն բաները կը սորվին, օրինակի համար, ջուր բերել, փայտ կրել, անօթ լուալ, կրակ վառել» և այլն և այլն... Եւ՝ ի հաստատութիւն իւր ըսածին կրանփրէ սպային Ափրիկեան ճանապարհորդութեան դէպք մը կը յիշէ։

«Փուռը կը տաքցուներ. ուշադրութիւն կ՚ընէր որ չըլլայ թէ դիպուածով ածուխի կտոր մը վար իյնայ և հրդեհի պատճառ ըլլայ. ջերմութեան չափը ամենայն սրամտութեամբ կը կանոնաւորէր, երբ ճիշդ հարկաւոր եղած աստիճանը հասնէր՝ կ՚երթար հացագործը կը կոչէր, որ իր կենդանոյն սրամտութեան վրայ ըստ ամենայնի վստահ անհոգ էր յայսմ մասին, և կապկին ազդարարութենէն վերջը իսկոյն կը փութար փուռը ձգելու հացերը կամ կարկանդակները. բազմաթիւ ամաց ընթացքին մէջ, այս հացագործը ամենևին չի յիշեր որ կապիկը կամ սխալած և կամ խաբած ըլլայ»։

Ցիրաւի այս կապիկը ընտանեցած էր, սակայն ականատես մը կը պատմէ մեզի՝ որ ուրիշ կապիկ մը ճիշդ նոյն պաշտօնը կը կատարէր հարուստ տան մը մէջ. այսինքն առաւօտը կանուխ ձմեռ ժամանակ կ՚ելնէր և բոլոր կրակարանները կը վառէր՝ իբր տանը սպասաւորը ըլլար։

Փապուղի (tunnel) Սէն–Գլէրի։ — Սէն–Գլէր գետին ի լայնութիւնն շինուած փապուղին, ի մէջ Հիւստոնի և Սառնիայ, աշխարհիս վրայ քան զամէնն երկայն փապուղին է գետի տակ, և գործ է այս Ամերիկոյ մեծահռչակ ճարտարապետաց միոյն։ Երկայնութիւնն է 6 քիլոմէդր, և բոլորովին երկաթեայ է շինութիւնն առանց քար մը կամ կղմինտր գանուելու այս շինուածոյս մէջ։ Պարզ խողովակ մ՚է կամ կռածոյ երկաթի 6 մէդր տրամաչափով, որուն օդը կը փոխեն շոգեշարժ մեքենայիւք, ջերմացնելով շոգւով և էլեկտրական լուսով կը լուսաւորեն։ Երեքտասան ամիս աշխատեցան 600 գործաւորք այս երկայն փապուղոյն անցքն փորելու համար, որուն շինութիւնն ար-

ժեց 2,000,000 տոլլար (10,000,000 ֆրանք)։ Կռածոյ երկաթին թիթեղք որ զիսոզովակն կը կազմեն այնպէս հատեալ են որ երեք-տասան թիթեղք և մետաղական մաս մը՝ որ զբանալին կը կազմէ, խողովակին չրջապատն կը լեցընեն։

Իւրաքանչիւր օղակն կատարեալ 14,150 փարէ (7,000 քիլոկրամ) կը կշռէ և պէտք եղած է 3800 հատ, ուստի և համօրէն կշիռն է 25,000 հազարագրամ՝ (tonne)։

Արդ այս հոչակաւոր փապուղւոյն շինութիւնն առաւելապէս Պ. Հոպսոնի ընծայել պէտք է։

Աշխարհիս մեհեանոյն ժամացոյցն։— Քիչ ատենէն պիտի հատատեն Փիլատելֆիոյ Օթել տը Վիլի աշտարակին մէջ ժամացոյց մը որ լրանալու վրայ է, և որոյ հաւասարն չկայ յաշխարհի։ Ժամացուցին երեսն պիտի ունենայ տասն մեդր տրամագիծ և գիշերն ելեկտրականութեամբ պիտի լուսաւորուի և այնպիսի բարձրութիւն պիտի ունենայ որ քաղքին ամէն կողմէն տեսանելի ըլլայ։ Վայրենացոյց ասելն 4 մեդր երկայնութիւն և ժամ ցուցընողն 2մ,50 պիտի ունենան։ Զանգակն որ պիտի զարնէ 25,000 քիլոկրամ պիտի կշռէ և յամենայն կողմանց քաղքին լսելի պիտի ըլլայ. իսկ դաշնակաւոր զանգակներ պիտի հնչեցնեն քառորդն, կէս ժամն և երեք քառորդն։

Այս հսկայամարմին ժամացուցին լարելն պիտի կատարուի ամէն օր շոգեշարժ մեքենայի ձեռօք որ աշտարակին մէջ դրուած է։

Լաբլուդայի ոչխարաց յեւրոպա մուտքն։— Լիվերբուլի վաճառականն մը յորդորեալ Արգենթինայի Հասարակապետութեան հիւպատէն, ուղղակի Լաբլադայէն 300–400 ոչխար բերել տուաւ։

Փորձն լաւ յաջողեցաւ, վասն զի տասը հատ միայն ճանապարհութեան մէջոց, և մնացածներն երբ հասան, կրկին գնով վաճառուեցան սառուցի մէջ պահեալ ոչխարներու միսէն աւելի զրոս կը բերեն Պուէնոս Այրէսէ եկած շոգենաւերն՝ ցրտացուցիչ սենեակաց մէջ պահելով։

Այս յաջողութիւնս անտարակոյս զրգիռ պիտի ըլլայ ուրիշ վաճառականաց ևս նոյնպէս ընելու, որ և մեծ շահու առիթ պիտի ըլլայ անգլիայի վաճառական շոգենաւուց։

ցանկ

ՀԱՑԿԱԿԱՆՔ

Հայ – Վենետ 369
Բանախօսութիւն Դեկտ. խոսքացուցոյն 376
Մասիք 385

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Ալեքսանդրի աշխարհագրութիւն 390
Ոսկեծաղիկ կամ Նարգիս 395
Ամերիկայի գաղթականութիւնք 399
Վրաց Կառնիացի 401

ԳԻՏԱԿԱՆՔ

Բնակելիութիւն Մոլորակաց 407
Մարսեթոնի գիւղացանց գերեզմանն 411
Զարմանալի լուրերդ 412
Մառաց հատուցն եկեղեցականութեամբ . . . . . »
Արծաթահանքի մը գիւտը 413
Կապիկը և հուր . . . . . »
Փապուղի Սէն – Գլէրի 414
Աշխարհիս մեծագոյն ժամացոյցն 415
Լաբլաշայի ոչխարք . . . . . »

© National Library of Armenia

ՆԵՐԿԱՑ 1890 ԹՈՒԻՆ

«ՄՇԱԿ»

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակուի Թիֆլիսում, նոյն դիրքով եւ նոյն պրոգրամայով։

«ՄՇԱԿի» տարեկան գինն է . . . . . 10 ռբ.
վեց ամսուանը . . . . . 6 ռբ.

Հասցէն՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբ.-Հրատ. Գ. ԱՐԾՐՈՒՆԻ

1890 ԻՆ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

«ԱՐՁԱԳԱՆՔ»

ՇԱԲԱԹԱԹԵՐԹՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Տարեկան բաժանորդագինն է . . . . . 10 ռբ.
կէս տարուանը . . . . . 6 ռբ.

Հասցէն՝ Tiflis, Rédaction de la Revue «ARDZAGANG».

Խմբ.-Հրատ. ԱՌԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՆԵՐԿԱՑ 1890 ԹՈՒԻՆ

«ՄՈՒՐՃ»

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐԸ

«ՄՈՒՐՃի» տարեկանն է . . . . . 10 ռբ.
կէս տարուան . . . . . 6 ռբ.

Հասցէն՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURDJ».

Խմբ.-Հրատ. ԱԻԵՏԻՔ ԱՐԱՄԽԱՆԵԱՆՑ

«ԱՂԲԻՒՐ»

ՄԻԱՄՍԵԱՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

(Երեխաների եւ դաստիարակների համար)

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, 1890

«Աղբիւրի» տարեկան բաժանորդագինն է . . . . . 3 ռբ.

Հասցէն՝ Tiflis (Caucase), Rédaction de la Revue «AGBUR».

Խմբ.-Հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

© National Library of Armenia

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

Կ. ՊՕԼԻՍ . . . . . Ղազարեան. Սեպրոս խան. Գրասենեակ, թիւ 3։
ՏՐԱԳԻՋՈՆ . . . . . Մխիթարեան Վարժարան։
ՊԱՐՏԻԶԱԿ . . . . . Մխիթարեան Վարժարան։
ԹԼՈՐՈՍԻԱ . . . . . Մեծարգոյ Հ. Բերովբէ Վ. Քուշնեբեան։
ՍԻՄՖԵՐՈՊՈԼ . . . . Մեծարգոյ Հ. Նիկողայոս Վ. Ջիգի։
ԿԱՐԻՆ . . . . . Մեծապատիւ Կարապետ էֆ. Սրապեան։
ՏՓԼԻՍ . . . . . Մեծապատիւ Պ. Յովսէփիմ Զաքարլաչեան։
ՌՈՒՍՃՈՒՔ . . . . . Մեծապատիւ Լեւոն էֆ. Յ. Մինասեան։
ՍԵԲԱՍՏԻԱ . . . . . Մեծապատիւ Յ. էֆ. Բարունակ։
ԱԽԼՅԻԱ . . . . . Մեծապատիւ Պ. Մկրտիչ Ճուլարտեան։
ՄԱՐՍՈՒԱՆ . . . . . Մեծապատիւ Յոհան. Թ. էֆ. Գայայեան։
ԱՏԱՆԱ . . . . . Մեծապատիւ Պետ. էֆ. Ուրֆալեան։
ԱՄԱՍԻԱ . . . . . Մեծապատիւ Բարունակ էֆ. Բարսեղեան։
ՌՈՍՏՈՎ (ԴՈՆ ՎԻՐԱՏ) . . Մեծապատիւ Պ. Մինասէ Թիմինճեան։
Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆ . . . . Մեծապատիւ Պ. Սերովբէ Զաքարլաչեան
ԱՍՏՐԱԽԱՆ . . . . . Մեծապատիւ Պ. Ստեփան Պ. Սերեբրակեանց

ՊԱՏՄԱՆՔ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

1. Ամենայն ոք որ փափաքի Բազմավէպ Հանդիսարանի գործակալութեան իրաւունք ստանալ, հարկ է որ առ. նուազն՝ հինգ բաժանորդ գտնէ։
2. Բազմավէպ Հանդիսարանի Տեսչութիւնն առ՝ի փոխարէն գործակալաց ցուցած վաստակոց, կը շնորհէ նոցա 30% զեղչ իւրաքանչիւր բաժանորդագրոյ վրայ, և. ձրի օրինակ մ՝եա՝ որք ստան բաժանորդ կը գտնեն։
3. Բազմավէպ Հանդիսարանի Տեսչութիւնն իւր վրայ կ՝առնու առ իւրաքանչիւր գործակալս ուղարկելիք օրինակաց Ճանապարհի ծախքը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ, աշխարհաբառ գաստագիրք, զարգարեալ 415 գեղեցիկ պատկերաք, յօրինեալ 'ի Հ. Պ. Գաֆֆեան	ֆր.	2 50
ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ } գաստագիրք պատկերազարդք 'ի Հ. Հ. Պափարեան	»	2 50
ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ }	»	
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ընդարձակ, երկրորդ տպագրութիւն, բազմաթիւ կարևոր փոփոխութեամբք և յաւելուածովք .	»	5 —

© National Library of Armenia